

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ



Եվրոպայում անվտանգության և  
համագործակցության կազմակերպություն  
Երևանյան գրասենյակ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ  
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունը իրականացվել է «Մոցիալական արդարություն» հասարակական կազմակերպության կողմից:

Աշխատանքային խումբ.

Արշակ Գասպարյան՝ աշխատանքային խմբի ղեկավար

Միրանուշ Սահակյան՝ իրավաբան

Մարգարիտա Գալստյան՝ փորձագետ

Լևոն Բարխուդարյան՝ փորձագետ

Արտակ Խաչատրյան՝ սոցիոլոգ

ISBN 978-92-9234-155-8

Հետազոտությունը պատրաստվել և տպագրվել է Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության երևանյան գրասենյակի աջակցությամբ: Մույն հրապարակման մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամընկնեն ԵԱՀԿ-ի տեսակետների հետ:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....	5
<b>ԳԼՈՒԽ 1 .....</b>	<b>8</b>
1. «ՊՐՈԲԱՑԻԱ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ .....	8
2. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ..9	
2.1. Ընդհանուր մոտեցումները .....	9
2.2. Պրոբացիայի ծառայության ենթակայությունը.....	11
2.3. Պրոբացիայի ծառայության հիմնարար սկզբունքները.....	13
2.4. Պրոբացիայի ծառայության անձնակազմը.....	16
2.5. Պրոբացիայի ծառայության ֆինանսավորման առանձնահատկությունները .....	18
3. ՊՐՈԲԱՑԻԱ. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ .....	19
3.1. Եվրոպայի խորհրդի փաստաթղթեր.....	19
3.2. Միավորված ազգերի կազմակերպության փաստաթղթեր .....	19
4. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈԽԼԵՐ	
ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ .....	21
4.1. Փուլեր.....	21
4.2. Գործառույթներ .....	23
4.2.1. Զեկույցներ.....	23
4.2.2. Հսկողություն և վերահսկողություն .....	24
4.2.3. Հանրային աշխատանքներ.....	25
4.2.4. Մեդիացիա.....	26
4.2.5. Հետազատման խնամք (After care).....	27
<b>ԳԼՈՒԽ 2 .....</b>	<b>29</b>
1. ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ .....	29
1.1. Արդի իրավիճակի նկարագրություն.....	29
1.2. Որակական հետազոտության մեթոդաբանություն և արդյունքներ .....	31
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ .....	37
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐԴՐՎԵԼԻՔ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	39
3.1. Ընդհանուր նկարագիրը.....	42
3.2. Պրոբացիայի ծառայության առաքելությունը.....	43
3.3. Պրոբացիայի ծառայության նպատակները և խնդիրները .....	43

3.4. Պրոբացիայի ծառայության փոխհարաբերությունը քրեակատարողական ծառայության հետ.....	43
3.5. Պրոբացիայի ծառայության համագործակցությունը.....	45
3.6. Պրոբացիայի ծառայության գործունեության հիմնական շրջանակը.....	47
4. ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ .....	48
4.1. Մինչդատական փուլում պրոբացիայի բնութագիրը .....	48
4.1.1. Մինչդատական զեկույց .....	48
4.1.2. Այլընտրանքային խափանման միջոցների կիրառում .....	51
4.2. Դատական փուլում պրոբացիայի բնութագիրը.....	52
4.2.1. Պատժի նշանակումից առաջ զեկույցի տրամադրում .....	52
4.2.2. Մեղիացիա.....	54
4.3. Պենիտենցիար փուլում պրոբացիայի բնութագիրը .....	56
4.4. Հետպենիտենցիար փուլում պրոբացիայի բնութագիրը .....	57
5. ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՊՐՈԲԱՑԻՈՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	58

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Վերջին տասնամյակում եվրոպական մի շարք երկրներում հանցագործությունների թվի աճման միտումը, քրեակատարողական հիմնարկների գերբեռնվածությունն ու հասարակության անվտանգության երաշխիքների նվազումը հանգեցրել է արդարադատության համակարգի նկատմամբ դժգոհության և արդարադատության ավանդական պրակտիկայի նկատմամբ նվազող հետաքրքրության: Այս հանգամանքը կարևորում է այլընտրանքային և հակազդեցության նոր միջոցների կիրառման անհրաժեշտությունը:

Ներկայումս, որպես այլընտրանք, եվրոպական մի շարք երկրներում դիտարկվում է վերականգնողական արդարադատության անցումը, քանի որ այն ապահովում է առավել ճկուն հակազդում հանցագործությանը: Այդ հակազդումը ստեղծում է հավասար պայմաններ երկու կողմերի արժանապատվությունը հարգելու, ինչպես նաև կողմերի միջև փոխըմբռնման ձևավորման համար: Ավելին, վերականգնողական արդարադատության միջոցով մեծանում է հասարակության դերը՝ որպես հանցագործությունների ու սոցիալական անկարգությունների դեմ պայքարի կարևոր գործոն: Եվ վերջապես, վերականգնողական արդարադատությունը մատչելի միջոց է, որը հնարավոր է հեշտությամբ ադապտացնել տվյալ երկրի ներքին իրավական համակարգում: Այս առումով վերականգնողական արդարադատության սկզբունքները որդեգրած պետությունների փորձի ուսումնասիրությունը փաստում է, որ այդ պետություններում վերականգնողական ծրագրերի իրականացման առաքելությունն իրականացնում են պրոբացիոն ծառայությունները<sup>1</sup>, ապահովելով պատժի նպատակների իրացումը՝ ազատագրկման փոխարեն անձին պահելով ազատության մեջ: Այս ծառայությունների հիմքում դրվեց հասարակությունում (համայնքում) անձի վերասոցիալականացման գաղափարախոսությունը, ինչը մասնակիորեն նպաստեց նաև քրեակատարողական հիմնարկների բեռնաթափման խնդրի լուծմանը:

Մեր երկրում, դեռևս 90-ական թվականներից սկիզբ առած դատաիրավական բարեփոխումների շրջանակներում, տեղի ունեցան մի շարք օրենսդրական փոփոխություններ, որոնք իրենց ազդեցությունն ունեցան Հայաստանի Հանրապետության քրեական քաղաքականության վրա ընդհանրապես և պատժողական քաղաքականության վրա՝ մասնավորապես: Արդարադատության ոլորտում մեկնարկած և մինչև այժմ շարունակվող բարեփոխումները նպատակ ունեն ստեղծել մի պետություն, որը հիմնված կլինի օրենքի գերակայության, ժողովրդավարական արժեքների, մարդու իրավունքների պաշտպանության վրա:

<sup>1</sup> Handbook on Restorative Justice Programmes, United Nations Office on Drugs and Crime, 2006.

Արտաքին քաղաքականությունում որպես առաջնայնություն ընտրելով եվրոպական ինտեգրումը, եվրոպական և միջազգային արժեքների և գաղափարների ներմուծումը՝ Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է մի շարք պարտավորություններ, որոնց արդյունավետ իրականացմամբ է պայմանավորված երկրի հետագա զարգացումը: Մասնավորապես 2002 թվականին Հայաստանի Հանրապետությունը վավերացրեց Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950 թվականի կոնվենցիան, ինչի հետևանքով պետության կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին համահունչ ձևափոխություններ պետք է կատարվեին ներպետական համապատասխան ոլորտներում, այդ թվում՝ քրեական արդարադատության բնագավառում:

Բարեփոխումներից անմասն չմնաց նաև քրեակատարողական համակարգը, որը 2001 թվականին ՀՀ ներքին գործերի նախարարության ենթակայությունից անցավ ՀՀ արդարադատության նախարարության ենթակայությանը, և հիմք դրվեց քրեակատարողական համակարգի լայնածավալ և շարունակական բարեփոխումների:

Այնուամենայնիվ, ի թիվս քրեակատարողական ոլորտում առկա այլ խնդիրների, դեռևս արդիական են մնում քրեակատարողական հիմնարկների գերբեռնվածությունն ու կալանավորված և դատապարտված անձնաց հետ վերականգնողական, ուղղիչ աշխատանքների արդյունավետության բարձրացումը, ինչպես նաև այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը, այլընտրանքային պատիժների կատարման առանձնահատկություններն ու պրակտիկան:

Այս առումով արդարադատության ամբողջ ոլորտում իրականացվող բարեփոխումները պետք է ենթադրեն ազատագրկման ավանդական գաղափարախոսությունից անցում կատարել վերասոցիալականացման և վերականգնողական արդարադատության գաղափարախոսության, որի էությունը ազատագրկմանն այլընտրանքային միջոցներով պատժի նպատակներին հասնելն է՝ պրոբացիոն ծառայությունների գործունեության արդյունքում:

Պետք է փաստել, որ 2012 թվականի հուլիսի 2-ին ՀՀ Նախագահի կողմից ստորագրված «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրում և ծրագրից բխող միջոցառումների ցանկում» քրեական արդարադատության և քրեական պատիժների համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներում առաջնայնություններից են քրեակատարողական համակարգի բարեփոխումները, որտեղ ամրագրված է

նան ՀՀ արդարադատության նախարարության ենթակայությամբ գործող պրոբացիոն պետական ծառայության ստեղծման անհրաժեշտությունը<sup>2</sup>:

Սույն պայմաններում թերևս անհրաժեշտ է փաստել, որ քրեակատարողական համակարգը կազմում է իրավական համակարգի բաղկացուցիչ մասը, և դրա բարեփոխումները փոխկապված են իրավական ողջ համակարգում տեղի ունեցող օրենսդրական և գործնական բարեփոխումներին:

Ուստի անհրաժեշտ է բարեփոխումների ռազմավարությամբ խթանել փոփոխությունները երեք մակարդակներում.

1. ռազմավարական մակարդակով անհրաժեշտ է զգալիորեն ավելի մեծ օժանդակություն ապահովել այլընտրանքային պատժատեսակների ներդրմանը՝ հաշվի առնելով, որ արդարադատության համակարգում չափազանց շատ են կիրառվում ազատազրկման տեսքով պատիժները.

2. գործառնական մակարդակով անհրաժեշտ է խթանել աշխատանքի արդյունավետ մեթոդները, որոնք նկարագրված են համայնքային պատիժների և միջոցների վերաբերյալ եվրոպական կանոնների<sup>3</sup> և պրոբացիայի եվրոպական կանոնների<sup>4</sup> մեջ.

3. կազմակերպական մակարդակով անհրաժեշտ է օգնել պրոբացիայի ծառայության ներդրմանը՝ վերջինիս համար ապահովելով իր գործառույթների արդյունավետ իրականացումը երկրի ողջ տարածքում:

Հաշվի առնելով խնդրի արդիականությունը՝ առաջնային դարձավ պրոբացիոն ծառայության ներդրման համար առկա պայմանների, հնարավորությունների ուսումնասիրությունը:

Այս առումով ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ իրականացված սույն հետազոտության նպատակն է՝ ներկայացնելով եվրոպական երկրներում այս ծառայությունների տարբեր մոդելներ (ներառյալ ծառայությունների կառուցվածքը, ենթակայությունը, սկզբունքները, աշխատակազմի և ծառայության ֆինանսավորման առանձնահատկությունները)՝ նախանշել դրանց տարբերություններն ու առանձնահատկությունները: Ընդհանուր առմամբ հետազոտությամբ ներկայացվել է երկու տասնյակից ավելի եվրոպական երկրների փորձ:

Հետազոտության արդյունքները մեր երկրի համար արդիական դարձնելու նպատակով, բացի եվրոպական փորձի ներկայացումից, իրականացվել է նաև որակական հետազոտություն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկի և քրեակատարողական վար-

<sup>2</sup> «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիր»:

<sup>3</sup> Explanatory memorandum to Recommendation No. R (92) 16 of the Committee of Ministers to member states European rules on community sanctions and measures.

<sup>4</sup> Recommendation CM/Rec (2010)1 of the Committee of Ministers to member states on the Council of Europe Probation Rules.



չության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի աշխատակիցների շրջանում՝ պարզելու համար պատժի կրման ընթացքում (ներառյալ վերահսկողության, փորձաշրջանի մեջ գտնվողներ) դատապարտյալների հետ իրականացվող վերականգնողական և ուղղիչ բնույթի աշխատանքների ներկա վիճակն ու առանձնահատկությունները:

Հետազոտության արդյունքները կարող են հիմք ծառայել պետական լիազոր մարմնի կողմից մեր երկրում պրոբացիոն ծառայության ներդրման քաղաքականությունն ու ռազմավարությունը մշակելու գործընթացներում:

## ԳԼՈՒԽ 1

### 1. «ՊՐՈԲԱՑԻԱ» ՀԱՄԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Թարգմանաբար «պրոբացիա» նշանակում է փորձաշրջան կամ փորձություն: Պրոբացիա հասկացության բնորոշման վերաբերյալ առկա են տարբեր մոտեցումներ: Որոշ հեղինակներ կարծում են, որ պրոբացիայի էությունն այն է, որ դատավճիռն ամբողջությամբ կամ մասնակիորեն կասեցվում է, փոխարենը հանցագործը ազատություն է ստանում՝ պրոբացիոն մարմնի վերահսկողության և հատուկ պայմանների առկայությամբ<sup>5</sup>:

Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ պրոբացիան հատուկ ընտրված հանցագործների հետ աշխատանքներ տանելու մեթոդ է: Այն բնութագրվում է պատժի պայմանական կասեցմամբ և իրավախախտի նկատմամբ վերահսկողության սահմանմամբ<sup>6</sup>:

Ըստ մեկ այլ բնորոշման՝ պրոբացիան լայն հասկացություն է, պատժի յուրահատուկ մեթոդ, որը հիմնվում է սոցիալ-մանկավարժական սկզբունքների վրա և բնութագրվում է հանցագործի նկատմամբ վերահսկողություն սահմանելու և օգնություն տրամադրելու համակցությամբ:

Հաջորդ մոտեցման համաձայն՝ պրոբացիան ազատ համակարգ է, որը կիրառվում է այն իրավախախտների նկատմամբ, ովքեր առանձնանում են իրենց քրեական անհատականությամբ, կատարված հանցանքի բնույթով, գործող համակարգի նկատմամբ ունեցած վերաբերմունքով, որի նպատակն է իրենց փոխելու հնարավորություն տալը և սոցիալական միջավայրում իրենց տեղը գտնելը<sup>7</sup>:

Այնուամենայնիվ, պրոբացիա տերմինի իրավական բացատրությունը տրվել է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից ԵԽ անդամ պետությունների ուղղված 2010/1 առաջարկությամբ: Համաձայն այդ առաջարկության՝ «Պրոբացիան վերաբերում է հասարակության մեջ օրենքով սահմանված և հանցագործություն կատարած անձի նկատմամբ նշանակված պատիժների ու միջոցների կատարմանը: Այն ներառում է մի շարք գործողություններ և միջամտություններ, որոնց թվում են վերահսկողությունը, ուղղորդումն ու աջակցությունը՝ ուղղված հանցագործություն կատարած անձի սոցիալական ներգրավմանը, ինչպես նաև հանրային անվտանգությանը նպաստելուն...»<sup>8</sup>:

<sup>5</sup> Handbook on Probation Services: Guidelines for Probation Practitioners and Managers. United Nations Interregional Crime and Justice Research Institute, Jon Klaus, 1998.

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> Cartledge et al. 1981, in Harris 1995: 3-4.

<sup>8</sup> Recommendation CM/Rec (2010)1 of the Committee of Ministers to member states on the Council of Europe Probation Rules.

## 2. ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ՊՐՈԲԱՑԻԱՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

### 2.1. Ընդհանուր մոտեցումներ

Քրեական արդարադատության համակարգում պատժի ինստիտուտն այն կարևոր բաղադրիչներից է, որն ապահովում է արդարադատության ամբողջականությունը, նաև տեսանելի և արդյունավետ դարձնում արդարադատության իրականացումը:

Եթե դիտարկենք նաև արդի եվրոպական երկրներում այս համակարգերի արդի միտումները, ապա պետք է փաստել, որ պատժի և արդարադատության իրականացումը գնում է դեպի այլընտրանքային պատժամիջոցների կիրառման ընդլայնում և վերականգնողական արդարադատության համակարգի անցում: Հատկապես Մեծ Բրիտանիան առաջատարն էր այս ոլորտում, որը և համաշխարհային պրակտիկային առաջարկեց նոր ծառայություն՝ պրոբացիայի ծառայությունը: Պրոբացիան մեծ տարածում գտավ մի շարք եվրոպական երկրների իրավական համակարգերում: Վերջին տասնամյակի ընթացքում Պրոբացիայի պետական ծառայություն է ստեղծվել նաև նախկին խորհրդային հանրապետություններում՝ Լատվիայում, Էստոնիայում, Մոլդովայում, Վրաստանում:

Գոյություն ունեն այնպիսի երկրներ, որտեղ պրոբացիոն աշխատանքները սկզբում թույլատրվել են միայն անչափահասներին: Մասնավորապես Հունգարիայում<sup>9</sup> և Լեհաստանում<sup>10</sup> պրոբացիոն ծառայությունների խնդիրն էր դատարանների համար անչափահասների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը և ծնողական հսկողության ներքո գտնվող անչափահասներին լրացուցիչ խնամքի տրամադրումը: Այս աշխատանքները կատարելու համար դատարանները վարձակալում էին հատուկ սոցիալական աշխատողների:

Մեծ թվով երկրներում (ինչպես, օրինակ՝ Ավստրիան, Չեխիան, Լատվիան, Էստոնիան, Ֆինլանդիան և այլն), պրոբացիոն ծառայությունների գործառույթներն ընդգրկում են ինչպես չափահասներին, այնպես էլ անչափահասներին<sup>11</sup>:

Եվրոպական փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշ երկրներում անչափահասների շրջանում պրոբացիոն ծառայություններն իրականացնում են հանցագործությունների կանխարգելման ծրագրեր (Բուլղարիայում դա օրենքով սահմանված հստակ պարտավորություն է, Լատվիայում և Լիտվայում դա իրականացվում է պրոբացիոն ծառայության նախաձեռնությամբ)<sup>12</sup>:

<sup>9</sup> European Probation Service Systems: A Comparative Overview. Anton M. van Kalmthout and Ioan Durnescu. Chapter 14: Hungary.

<sup>10</sup> European Probation Service Systems: A Comparative Overview. Anton M. van Kalmthout and Ioan Durnescu. Chapter 25: Poland.

<sup>11</sup> Handbook on Probation Services: Guidelines for Probation Practitioners and Managers. United Nations Interregional Crime and Justice Research Institute, Jon Klaus, 1998.

<sup>12</sup> Handbook on Probation Services: Guidelines for Probation Practitioners and Managers. United Nations Interregional Crime and Justice Research Institute, Jon Klaus, 1998.

Տարբեր երկրներում պրոբացիոն ծառայության հիմնադրման և զարգացման հետ միասին պրոբացիայի ծառայություններն ընդլայնում էին իրենց լիազորությունները՝ ընդգրկելով նոր գործառնություններ՝ սկսած այլընտրանքային պատիժների կատարումից և մեղիացիայից մինչև քրեական գործերով մինչդատական վարույթի ընթացքում կալանավորմանն այլընտրանք հանդիսացող խափանման միջոցների կիրառման ապահովումը (հսկողության հանձնելը, տնային կալանք): Տնային կալանքի կատարման ընթացքում հանցագործություն կատարած անձանց աջակցության, օժանդակության գործառնություններ են նախատեսվում հատկապես Դանիայում, Իտալիայում, Նորվեգիայում, Շոտլանդիայում և Սլովենիայում<sup>13</sup>:

Պրոբացիոն ծառայությունն իր կազմակերպարարական տեսքով և գերատեսչական ու այլ ենթակայությամբ տարբեր երկրներում կրում է տարբեր բնույթ<sup>14</sup>: Այնուամենայնիվ, պետք է փաստել, որ, անկախ պետության կողմից որդեգրած քաղաքականությանն ու պրոբացիա եզրույթի տարատեսակ կիրառումից, պրոբացիայի ծառայությունն այն մարմինն է, որը տվյալ երկրի օրենսդրության կարգավորմամբ լիազորված է այս կամ այն չափով իրականացնել «պրոբացիա» եզրույթի մեջ մտնող գործառնությունները (տարբեր մոտեցումների մասին կխոսվի հաջորդ վերնագրերում):

Եվ չնայած մի շարք նմանությունների ու տարբերությունների, այնուամենայնիվ, Եվրոպական երկրների համար գլխադասային իրավական կարգավորում է տրված վերը հիշատակված Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից ԵԽ անդամ պետություններին ուղղված 2010/1 առաջարկությամբ:

Ըստ այդ հանձնարարականի՝ «...օրենքով սահմանված կարգով նշանակված ցանկացած մարմին, ով իրականացնում է վերը թվարկած գործառնությունները, ձևավորում է պրոբացիոն ծառայությունը»<sup>15</sup>:

## ***2.2. Պրոբացիայի ծառայության ենթակայությունը***

Աշխարհում գոյություն ունեցող յուրաքանչյուր երկիր առանձնանում է իր սոցիալ-մշակութային արժեքներով և ավանդույթներով, ինչը, բնականաբար, ազդեցություն է ունենում տվյալ երկրի իրավական համակարգի և պրոբացիոն ծրագրերի իրագործման և կազմակերպման կոնկրետ համակարգի վրա: Որոշ երկրներում գործում են զարգացած պրոբացիոն ծառայություններ, որոնք ներառում են հանրային ծառայություններ (աշխատանքներ), տուժող-հանցագործ, հաշտեցում և այլն: Եվրոպական երկրների մեծամասնությունը պատկանում է այս երկրների շարքին, սակայն համակարգի ներսում տարբերություններ և առանձնահատկություններ միշտ էլ լինում են:

<sup>13</sup> [http://www.cepprobation.org/uploaded\\_files/1\\_Chapter\\_1\\_Comparative\\_overview.pdf](http://www.cepprobation.org/uploaded_files/1_Chapter_1_Comparative_overview.pdf).

<sup>14</sup> European Probation Service Systems: A Comparative Overview. Anton M. van Kalmthout and Ioan Durnescu.

<sup>15</sup> Recommendation CM/Rec (2010)1 of the Committee of Ministers to member states on the Council of Europe Probation Rules.

Հաշվի առնելով առկա նմանություններն ու տարբերությունները, այնուամենայնիվ, միջազգային փորձի ուսումնասիրությունից բխում է, որ պրոբացիայի ծառայության ենթակայությունը հանգում է հիմնականում հետևյալ մի քանի ձևերի, մասնավորապես՝

1) դատական իշխանության ներսում. այդպիսի պետություններ են օրինակ՝ Էստոնիան, Չեխիան: Դրանցում ընդհանուր իրավասության յուրաքանչյուր դատարանին կից գործում է պրոբացիայի ծառայության առանձին ստորաբաժանում, իսկ պրոբացիայի ծառայողները հանդիսանում են դատական ծառայողներ<sup>16</sup>:

2) գործադիր իշխանության ենթակայությամբ. այս իրավակարգավորումը ընտրել է եվրոպական պետությունների մեծ մասը՝ Անգլիան, Շվեդիան, Դանիան, Ֆինլանդիան, Հունգարիան, Վրաստանը, Մոլդովան, Լատվիան և ուրիշներ: Այս դեպքում պրոբացիոն ծառայությունը կարող է հանդես գալ որպես արդարադատության համակարգի առանձին վարչություն, առանձնացված ստորաբաժանում կամ այլ կից ծառայություն, ինչպես, օրինակ՝ Հունգարիայում և Բելգիայում է:

Արդարադատության համակարգի ներսում բանտային համակարգի հետ միացված պրոբացիոն ծառայությունները նույնպես ունեն իրենց առանձնահատկությունները: Մասնավորապես Ֆրանսիայում պրոբացիոն ծառայությունն աչքի է ընկնում տարաբնույթ գործառնություններով: Սակայն խնդիրն այն է, որ այս խումբ պետություններում մեծամասամբ գործառնությունները ոչ միայն սահմանափակ են, այլ նաև բացակայում են մինչդատական և հետադատման փուլերում (Pre Trial Phase, Post Release Phase) վերահսկողություն սահմանելը, անձին տարաբնույթ օժանդակություն տրամադրելը (թմրամոլության, ալկոհոլաբուխության դեմ պայքարում) և այլն: Հետևաբար այս դեպքում պրոբացիոն ծառայությունը նոր հանցագործությունների կատարումը կանխելու և հանցագործին վերաինտեգրելու հարցում ավելի քիչ արդյունավետ է:

Ռուսաստանն ու Ուկրաինան ևս նախատեսում են արդարադատության նախարարության կառուցվածքում ստեղծել պրոբացիայի ծառայություն:

Պրոբացիայի ծառայությունները գերատեսչական ենթակայությամբ են գործում նաև Նորվեգիայում, Իտալիայում և Վրաստանում: Մասնավորապես Իտալիայում այս ծառայությունը գործում է ներքին գործերի նախարարության կազմում գործող պրոբացիոն և բանտային համակարգի կազմում<sup>17</sup>: Ոստիկանության և արդարադատության միասնական նախարարության կազմում գործում է Նորվեգիայում<sup>18</sup> և իրավաբանական օգնության, պրոբացիայի և ուղղիչ աշխատանքների նախարարության կազմում գործում է Վրաստանում<sup>19</sup>:

<sup>16</sup> European Probation Service Systems: A Comparative Overview. Anton M. van Kalmthout and Ioan Durnescu.

<sup>17</sup> European Probation Service Systems: A Comparative Overview. Anton van Kalmthout and Ioan Durnescu.

<sup>18</sup> [http://www.cepprobation.org/uploaded\\_files/Summary%20information%20on%20Norway.pdf](http://www.cepprobation.org/uploaded_files/Summary%20information%20on%20Norway.pdf).

<sup>19</sup> <http://www.probation.gov.ge/index.php?action=0&lang=eng>.

3) լիովին անկախ. այդպիսի պետություններ են հանդիսանում Ավստրիան<sup>20</sup> և Հոլանդիան<sup>21</sup>: Մասնավոր հատվածի կողմից պրոբացիայի իրագործումը դեռևս այդքան էլ տարածված չէ, սակայն դրա առանձնահատկություններն ու առավելություններն արդեն իսկ նկատելի են: Պրոբացիոն ծառայության իրականացումը մասնավոր կազմակերպությունների կողմից ապահովում է դրա գործառույթների իրագործումը պրոբացիայի ամբողջ ընթացքում/փորձաշրջանից առաջ, ընթացքում/ և ազատության մեջ լինելու ժամանակ: Այսուամենայնիվ, պետք է փաստել, որ այս երկրներում ևս, այդ կազմակերպությունները վերահսկվում և ֆինանսավորվում են արդարադատության նախարարության կողմից՝

4) խառը կամ ինքնատիպ մոտեցումներ, մասնավորապես՝

- դատախազության կառույցում, ինչպիսին գործում է միայն Լյուքսեմբուրգում<sup>22</sup>.
- տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սոցիալական ծառայությունների միջոցով, ինչպիսին Շոտլանդիայում է<sup>23</sup>:

### ***2.3. Պրոբացիայի ծառայության հիմնարար սկզբունքներ***

Ինչպես ցանկացած մարմնի, այնպես էլ պրոբացիոն ծառայության հիմնադրման և արդյունավետ գործունեության համար, առավել ևս, երբ այդ ծառայությունն իրականացնում է բազմամասնագիտական լայնածավալ աշխատանքներ, խիստ անհրաժեշտ է սահմանել այն հիմնարար սկզբունքները, որոնք ապահովելու և ամրագրելու են տվյալ ծառայության գործունեության ու գործողությունների շրջանակը:

Ինչպես պրոբացիոն ծառայությանը վերաբերող այլ հստակեցումները, այնպես էլ ծառայությունների գործունեության հիմնարար սկզբունքներն ամրագրված են ԵԽ անդամ պետություններին ուղղված և վերը հիշատակված առաջարկությամբ<sup>24</sup>:

Այդ առաջարկությունը սահմանում է պրոբացիոն ծառայությունների հիմնարար հետևյալ սկզբունքները.

1. դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների նպատակը կրկնահանցագործությունը կրճատելն է՝ հանցագործություն կատարած անձի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու միջոցով նրանց վերահսկելու (ներառյալ՝ հարկ եղած դեպքում հսկելու), ուղղորդելու ու աջակցելու և նրանց բարեհաջող սոցիալական ներգրավումը խթանելու նպատակով: Պրոբա-

<sup>20</sup> [http://www.cepprobation.org/uploaded\\_files/Summary%20information%20on%20Austria.pdf](http://www.cepprobation.org/uploaded_files/Summary%20information%20on%20Austria.pdf).

<sup>21</sup> [http://www.cepprobation.org/uploaded\\_files/Summary%20information%20on%20the%20Netherlands.pdf](http://www.cepprobation.org/uploaded_files/Summary%20information%20on%20the%20Netherlands.pdf).

<sup>22</sup> [http://www.cepprobation.org/uploaded\\_files/Summary%20information%20on%20Luxembourg.pdf](http://www.cepprobation.org/uploaded_files/Summary%20information%20on%20Luxembourg.pdf).

<sup>23</sup> [http://www.cepprobation.org/uploaded\\_files/Summary%20information%20on%20Scotland.pdf](http://www.cepprobation.org/uploaded_files/Summary%20information%20on%20Scotland.pdf).

<sup>24</sup> Recommendation CM/Rec(2010)1 of the Committee of Ministers to member states on the Council of Europe Probation Rules.

ցիան, ուստի, նպաստում է հանրային անվտանգությանը և արդարադատության պատշաճ իրականացմանը.

2. դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է հարգեն հանցագործություն կատարած անձանց իրավունքները: Դրանց բոլոր միջամտությունների դեպքում պետք է պատշաճ կերպով հաշվի առնվեն հանցագործություն կատարած անձանց արժանապատվությունը, առողջությունը, անվտանգությունն ու բարեկեցությունը.

3. բոլոր դեպքերում, երբ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները զբաղվում են հանցագործությունից տուժած անձանց վերաբերող հարցերով, դրանք պետք է հարգեն նրանց իրավունքներն ու կարիքները.

4. դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է ամբողջությամբ հաշվի առնեն հանցագործություն կատարած անձանց անհատական առանձնահատկությունները, պայմանները և կարիքները՝ ապահովելու համար, որպեսզի յուրաքանչյուր դեպքում ցուցաբերվի արդարացի և համարժեք վերաբերմունք: Դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների միջամտությունները պետք է իրականացվեն՝ բացառելով խտրականությունը որևէ հիմքով, ինչպես, օրինակ՝ սեռը, ռասան, մաշկի գույնը, լեզուն, կրոնը, հաշմանդամությունը, սեռական կողմնորոշումը, քաղաքական կամ այլ հայացքները, ազգային կամ սոցիալական ծագումը, էթնիկ փոքրամասնությանը պատկանելությունը, գույքային դրությունը, ծնունդը կամ այլ կարգավիճակը.

5. որևէ պատժի կամ միջոցի կատարման ժամանակ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները հանցագործություն կատարած անձին չպետք է ծանրաբեռնեն կամ սահմանափակեն նրա իրավունքներն ավելի, քան նախատեսված է դատական կամ վարչական մարմնի որոշմամբ և պահանջվում է յուրաքանչյուր առանձին դեպքում՝ կախված հանցագործության ծանրությունից կամ կրկնահանցագործության՝ պատշաճ կերպով գնահատված ռիսկից.

6. դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները, հնարավորինս պետք է ձգտեն հանցագործություն կատարած անձանց տեղեկացված համաձայնությունը ստանալուն և համագործակցությանը՝ նրանց առնչությամբ կատարվող միջամտության կապակցությամբ.

7. մեղքի վերջնական հաստատմանը նախորդող ցանկացած միջամտության համար պետք է պահանջվի հանցագործություն կատարած անձանց տեղեկացված համաձայնությունը, և այդպիսի միջամտությունը չպետք է հակասի անմեղության կանխավարկածին.

8. դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները, դրանց խնդիրներն ու պարտականությունները, ինչպես նաև պետական

մարմինների և այլ մարմինների հետ հարաբերությունները պետք է սահմանվեն ազգային իրավունքով.

9. պետական մարմինները պետք է շարունակեն պատասխանատվություն կրել պրոբացիայի համար նույնիսկ այն դեպքում, երբ ծառայությունները մատուցվում են այլ մարմինների կամ կամավորների կողմից.

10. դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների համար պետք է ապահովվեն համապատասխան հեղինակություն, ճանաչում և ռեսուրսներ.

11. որոշում կայացնող մարմինները հարկ եղած դեպքում պետք է դիմեն դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմիններին, որպեսզի վերջիններս, կրկնահանգագործությունը նվազեցնելու և ազատությունից զրկելու այլընտրանքների կիրառումը խթանելու նպատակով, տրամադրեն մասնագիտական խորհրդատվություն և իրականացնեն վերահսկողություն.

12. դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է համագործակցեն այլ պետական կամ մասնավոր կազմակերպությունների և տեղական համայնքների հետ՝ հանցագործություն կատարած անձանց սոցիալական ներգրավումը խթանելու նպատակով: Հանցագործություն կատարած անձանց համալիր կարիքները բավարարելու և հանրային անվտանգությունը ամրապնդելու համար անհրաժեշտ է կատարել համակարգված ու լրացուցիչ միջգերատեսչական և միջոլորտային աշխատանք.

13. դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների կողմից ձեռնարկվող բոլոր գործողություններն ու միջամտությունները պետք է համապատասխանեն ազգային և միջազգային էթիկական ու մասնագիտական ամենաբարձր չափանիշներին.

14. անհրաժեշտ է ունենալ պրոբացիոն գործունեությանը կապված բողոքարկման մատչելի, անկողմնակալ և արդյունավետ ընթացակարգեր.

15. դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է ենթարկվեն պարբերական պետական ստուգումների և (կամ) անկախ դիտանցման.

16. իրավասու մարմինները պետք է բարձրացնեն պրոբացիոն աշխատանքների արդյունավետությունը՝ խթանելով հետազոտական աշխատանքները, որոնք պետք է օգտագործվեն ուղղորդելու պրոբացիոն քաղաքականությունը և պրակտիկան.

17. իրավասու մարմինները և դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է տեղեկացնեն լրատվամիջոցներին և լայն հասարակությանը դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն



իրականացնող մարմինների աշխատանքի մասին՝ հասարակությունում նրանց դերի և արժեքի մասին առավել լավ պատկերացման ձևավորումը խթանելու նպատակով:<sup>25»</sup>

#### **2.4. Պրոբացիայի ծառայության անձնակազմը**

Եվրոպական երկրների փորձը ցույց է տալիս, որ պրոբացիոն ծառայության ոլորտի աշխատակիցները հիմնականում քաղաքացիական ծառայողներ են, ովքեր պետք է համապատասխանեն սահմանված պահանջներին: Սահմանված չափորոշիչներին համապատասխան՝ անձնակազմի ընտրությունն ու ներգրավումը նախատեսված է անդամ պետություններին ուղղված առաջարկությամբ: Այն ամրագրում է նաև, որ չափորոշիչներին համապատասխան ընտրության հիմքում պետք է ընկած լինի ազնվության, մարդասիրության, մասնագիտական կարողությունների, ինչպես նաև այն բարդ աշխատանքին համապատասխանության անհրաժեշտությունը, որ պետք է կատարեն պրոբացիոն աշխատակիցները<sup>26</sup>:

Եթե պրոբացիոն ծառայության գործառնությունները որոշակիորեն առնչվում են բանտային համակարգին, ապա աշխատակիցները հատուկ կոչում են ստանում (օրինակ՝ Ֆրանսիայում, որտեղ առանձնացված են բանտային սոցիալական աշխատակիցները): Ինչ վերաբերում է կրթական չափանիշներին, ապա պրոբացիոն աշխատակիցները պետք է սոցիալական գիտությունների կամ իրավաբանության, հոգեբանության ոլորտում բակալավրի աստիճան ունենան: Իռլանդիայում և Ֆրանսիայում աշխատակիցները պետք է նաև աշխատանքային փորձ ունենան: Շատ հաճախ աշխատանքի անցնելուց հետո նրանք մասնակցում են նախապատրաստական դասընթացների, որպեսզի ավելի ծանոթ լինեն այն աշխատանքներին, որոնց պետք է մասնակցեն:

Արդարադատության նախարարության կամ բանտային համակարգի կողմից հաճախ կազմակերպվում են հատուկ դասընթացներ՝ կոնկրետ աշխատանքներ կատարելու համար: Այդպիսիք են, օրինակ՝ թմրանյութերի կամ ակոհոլի օգտագործման դեմ տարվող աշխատանքները:

Աշխատանքային փորձի և մասնագիտական կոմպետենտության պահանջի մասին ամրագրված է նաև ՄՄԿ-ի Տոկիոյի կանոններով: Այս կանոններում հատկապես կարևորվում են նաև վերականգնման (treatment) ուղղված աշխատանքներում անձնակազմի համապատասխան վերապատրաստումն ու փորձը<sup>27</sup>:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջամտությունները պետք է նպատակաուղղված լինեն դատապարտյալների ուղղմանը և հանցավոր գործունեության դադարեցմանը, դատապարտյալների հետ աշխատանքում միջամտություններ կիրառելիս

<sup>25</sup> Recommendation CM/Rec (2010)1 of the Committee of Ministers to member states on the Council of Europe Probation Rules.

<sup>26</sup> Նույն տեղում, կետ 22:

<sup>27</sup> United Nations Standard Minimum Rules for Non-custodial Measures (The Tokyo Rules); 13,2.

պրոբացիոն աշխատակիցները պետք է ցուցաբերեն միջոլորտային մոտեցում: Այս մասին են վկայում անդամ պետություններին ուղղված CM/Rec(2010)1 առաջարկության պահանջները՝ ամրագրելով՝ «...դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է կարողանան օգտագործել միջոլորտային մոտեցման վրա հիմնված տարբեր մեթոդներ և համապատասխան ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված հիմնավոր գիտելիքներ»<sup>28</sup>:

Մասնագիտական գիտելիքների անհրաժեշտության մասին է վկայում նաև անդամ պետություններին ուղղված R(92)16 առաջարկությունը, որի 75-րդ կանոնով ամրագրված է. «այլընտրանքային պատիժներ կատարող պատասխանատու մարմինները պետք է կիրառեն մասնագիտական ստանդարտներին համապատասխան հաստատված մեթոդներ: Նշված մեթոդները պետք է համապատասխանեն սոցիալական աշխատանքի կամ հարակից այլ գիտությունների ժամանակակից զարգացումներին»<sup>29</sup>:

Աշխատակազմի առումով գրեթե բոլոր ծառայություններն ունեն եռաստիճան համակարգ՝

- ղեկավարություն.
- պրոբացիոն աշխատակիցներ.
- վարչական աշխատակազմ:

Պրոբացիոն աշխատանքների մեջ կարող են ներգրավվել նաև աշխատանքային այլ խմբեր: Նախ հատուկ պարտականություններով պրոբացիոն աշխատակիցներ, ովքեր ապահովում են վերահսկողության իրականացումը<sup>30</sup>:

Երկրորդ կարևոր խումբը բաղկացած է կամավորներից: Օրինակ՝ Շվեդիայում, բացի մասնագիտացված աշխատողներից կան նաև կամավորներ՝ սովորական քաղաքացիներ, ովքեր ընկերական կամ մտերմիկ հարաբերությունների մեջ են գտնվում հանցագործների հետ: Հանցագործներ հետ տարվող աշխատանքների համար նրանք ստանում են համեստ վարձատրություն<sup>31</sup>:

Տոկիոյի կանոնների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կամավորների ընտրությունը կատարվում է՝ հաշվի առնելով նրանց ունեցած վերաբերմունքն այն աշխատանքի նկատմամբ, որին նրանք ներգրավվելու են: Նրանք պետք է ապահովագրված լինեն իրենց պարտականությունները կատարելիս ստացած ֆիզիկական վնասվածքներից կամ պատահարներից: Կամավորները հիմնականում ներգրավվում են այնպիսի աշխատանքներում, ինչպիսիք են.

- հանցագործներին օգնություն տրամադրել աշխատանք փնտրելիս.

<sup>28</sup> Recommendation CM/Rec(2010)1 of the Committee of Ministers to member states on the Council of Europe Probation Rules; 76, 77.

<sup>29</sup> European Rules on Community Sanctions and Measures: Recommendation No. R (92) 16, Rule 75.

<sup>30</sup> [http://www.unicri.it/documentation\\_centre/probation/docs/Probation\\_handbook.pdf](http://www.unicri.it/documentation_centre/probation/docs/Probation_handbook.pdf).

<sup>31</sup> The Prison and Probation Service in the community in Sweden. Swedish Prison and Probation Service Head Office, 2011.

- օգնել այլ կամավորներին՝ ծառայություններին ներգրավվելու հարցում.
- գրագիտության հետ խնդիրներ ունեցող հանցագործների համար ծառայել որպես ուսուցիչներ և այլն<sup>32</sup>:

## ***2.5. Պրոբացիայի ծառայության ֆինանսավորման առանձնահատկություններ***

Պրոբացիայի ծառայության գործառույթների իրականացումն ու նպատակների իրագործումը տեսականորեն և պրակտիկայում անհնարին կլինի, եթե պրոբացիոն ծառայությունները չունենան դրանց համար նախատեսված ֆինանսական միջոցներ:

Եվրոպական երկրների փորձը ցույց է տալիս, որ մի շարք երկրներում պրոբացիոն ծառայությունները ֆինանսավորումը ստանում են արդարադատության նախարարության կողմից: Օրինակ՝ Ավստրիայում, որտեղ պրոբացիոն ծառայությունը հանդիսանում է անկախ մարմին, ֆինանսավորման 87%-ը ստացվում է արդարադատության նախարարությունից, 3,2%-ը՝ շրջաններից, իսկ մնացած մասը՝ տեղական իշխանություններից և հանրային ծառայություններից<sup>33</sup>:

Շոտլանդիայում պրոբացիոն ծառայության ֆինանսավորումը ապահովում է գործադիր իշխանությունը, իսկ ահա Շվեյցարիայում գոյություն ունեն տարատեսակ կազմակերպություններ, որոնք կատարում են ծառայությունների ֆինանսավորումը<sup>34</sup>:

Հատկանշական է, որ բազմաթիվ եվրոպական պետություններում, (ինչպիսիք են Ավստրիան, Բուլղարիան, Չեխիան, Ռումինիան, Անգլիան, Հունգարիան և այլն) օգտագործում են Եվրամիության տրամադրած ֆինանսական միջոցները: Զարմանալիորեն որոշ պետությունների զեկույցներից պարզ է դարձել, որ պրոբացիոն ծառայությունները կարող են ֆինանսավորում ստանալ ոչ միայն դատական իշխանությունից կամ պետական մարմիններից, այլ նաև այլ աղբյուրներից: Սրա լավագույն օրինակը Հոլանդիան է, որտեղ պրոբացիոն ծառայությունը կարող է ֆինանսավորում ստանալ մասնավոր կազմակերպություններից: Մյուս հատկանշական օրինակը վերաբերում է Բուլղարիային և Ռումինիային, որտեղ պրոբացիոն ծառայությունը չունի առանձնացված բյուջե և միացված է (օգտվում է) դատարանի կամ բանտային համակարգի բյուջեներին<sup>35</sup>:

<sup>32</sup> United Nations Standard Minimum Rules for Non-custodial Measures (The Tokyo Rules), G.A. res. 45/110, annex, 45 U.N. GAOR Supp. (No. 49A) at 197, U.N. Doc. A/45/49 (1990).

<sup>33</sup> European Probation Service Systems: A Comparative Overview. Anton van Kalmthout and Ioan Durnescu.

<sup>34</sup> [http://www.cepprobation.org/uploaded\\_files/Summary%20information%20on%20Scotland.pdf](http://www.cepprobation.org/uploaded_files/Summary%20information%20on%20Scotland.pdf).

<sup>35</sup> European Probation Service Systems: A Comparative Overview. Anton van Kalmthout and Ioan Durnescu.

### 3. ՊՐՈԲԱՅԻԱ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

#### **3.1. Եվրոպայի խորհրդի փաստաթղթեր**

Ոլորտի կարգավորման տեսակետից հիմնարար են, իհարկե, անդամ պետություններին ուղղված նախարարների կոմիտեի CM/Rec(2010)1 առաջարկությունը «Պրոբացիայի մասին Եվրոպայի խորհրդի կանոնների վերաբերյալ», որոնք ուղեցույց պետք է լինեն դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների ստեղծման ու պատշաճ գործունեության համար: Կանոնները կիրառվում են նաև այլ կազմակերպությունների նկատմամբ սույն կանոններով կարգավորվող խնդիրներն իրականացնելիս՝ ներառյալ այլ պետական կազմակերպությունների, հասարակական և առևտրային կազմակերպությունների նկատմամբ»<sup>36</sup>:

Այնուամենայնիվ, նշված կանոնները չեն գործում և չեն կարող գործել ինքնուրույն և առանձին վերցրած, քանի որ դրանք խիստ կապված են անդամ պետություններին ուղղված մի շարք այլ առաջարկություններով: Այս առումով վերը նշված կանոնները ևս ամրագրում են, որ այդ կանոններն անհրաժեշտ է մեկնաբանել «Այլընտրանքային պատիժների և միջոցների մասին եվրոպական կանոնների վերաբերյալ» R(92) 16 առաջարկության համատեքստում: Ավելին, նշված կանոնները լրացնում են «պատիժների կամ միջոցների կատարման հետ առնչվող անձնակազմի վերաբերյալ» R(97) 12 առաջարկության, «Քրեական գործերով միջնորդության վերաբերյալ» R(99) 19 առաջարկության, «Այլընտրանքային պատիժների և միջոցների մասին եվրոպական կանոնների իրականացումը բարելավելու վերաբերյալ» Rec(2000)22 առաջարկության, «Պայմանական ազատման (պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման) վերաբերյալ» Rec(2003)22 առաջարկության, «Քրեակատարողական հիմնարկների վարչակազմի կողմից ցմահ ազատազրկվածների և երկարաժամկետ ազատազրկվածների պատժի կրումը կազմակերպելու վերաբերյալ» Rec (2003)23 առաջարկության, «Եվրոպական բանտային կանոնների վերաբերյալ» Rec(2006)2 առաջարկության, «Կալանավորման, դրա կիրառման պայմանների և չարաշահման դեմ երաշխիքների վերաբերյալ» Rec(2006)13 առաջարկության համապատասխան դրույթները և պետք է մեկնաբանվեն դրանց համատեքստում»<sup>37</sup>:

#### **3.2. Միավորված ազգերի կազմակերպության փաստաթղթեր**

Թերևս, բացի եվրոպական միասնական օրենսդրությունից, կարևոր է նշել նաև «Միավորված ազգերի կազմակերպության՝ ազատությունից զրկելու հետ չկապված պատժամիջոցների վերաբերյալ նվազագույն կանոնները» կամ, ինչպես ընդունված է

<sup>36</sup> Recommendation CM/Rec (2010)1 of the Committee of Ministers to member states on the Council of Europe Probation Rules.

<sup>37</sup> Recommendation CM/Rec (2010)1 of the Committee of Ministers to member states on the Council of Europe Probation Rules.

կոչել, Տոկիոյի կանոնները<sup>38</sup>: Այս փաստաթուղթը սահմանում է հիմնական և կարևորագույն սկզբունքները, որոնց միջոցով խթանվում է ազատությունից զրկելու հետ կապ չունեցող և այլընտրանքային պատժամիջոցների կիրառությունը: Տոկիոյի կանոնների արժեքավոր դերն այն է, որ ազատությունից զրկելու հետ չկապված և այլընտրանքային պատժամիջոցները մանրամասն ներկայացված են մինչդատական փուլի, դատական, վճռի հրապարակման փուլի և դատապարտումից հետո եկող գործընթացի համար: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր փուլին բնորոշ են առանձին պատժատեսակներ և դրանց կիրառման իրավական պայմաններ:

Համաձայն նշված փաստաթղթի՝ պրոբացիայի կիրառման հնարավորությունը նախատեսված է դատական և պատժի նշանակման փուլի համար: Մասնավորապես կանոնների համաձայն՝ դատական իշխանության մարմինները, իրենց տրամադրության տակ ունենալով ազատությունից զրկելու հետ չկապված պատժամիջոցների ցանկը, պետք է ընտրեն դրանցից մեկը՝ հաշվի առնելով հանցագործին սոցիալապես վերաինտեգրելու պահանջները, տուժողի շահերն ու հասարակության անվտանգությունը: Ըստ այդմ՝ նախատեսված են հետևյալ միջոցները՝

- Բանավոր սանկցիաներ, օրինակ՝ նկատողություն, նախազգուշացում.
- պայմանական ազատում.
- տույժ.
- դրամական տուգանքներ.
- բռնագրավում կամ սեփականությունից զրկում.
- փոխհատուցում կամ նախկին վիճակի վերականգնում.
- պատժի հետաձգում.
- պրոբացիա և դատական վերահսկողություն.
- հանրային աշխատանքներ.
- տնային կալանք.
- թվարկված միջոցներց մի քանիսի միաժամանակյա կիրառում:

Ինչպես տեսնում ենք, պրոբացիայի կիրառումը նախատեսված է բացառապես դատական և պատժի նշանակման փուլերի համար (trial and sentencing stage):

Ազատությունից զրկելու հետ չկապված պատժատեսակների փուլային թվարկումից բացի, կանոնները սահմանում են նաև դրանց կիրառության ժամանակահատվածն ու պայմանները: Մասնավորապես, պրոբացիայի տևողությունը չի կարող լինել ավելին, քան իրավասու մարմնի կողմից օրենքով սահմանված կարգով նշանակված պատժի ժամանակահատվածը: Բացի այդ, յուրաքանչյուր այս կամ այն պատժատեսակի նշանակման դեպքում իրավասու մարմինները պետք է հաշվի առնեն ինչպես տուժողի և հանցա-

<sup>38</sup> United Nations Standard Minimum Rules for Non-custodial Measures (The Tokyo Rules), G.A. res. 45/110, annex, 45 U.N. GAOR Supp. (No. 49A) at 197, U.N. Doc. A/45/49 (1990).

գործի իրավունքներն ու պահանջները, այնպես էլ հասարակության անվատանգությունը (պաշտպանվածությունը): Յուրաքանչյուր պատժատեսակի կիրառման հենց սկզբում հանցագործին պետք է գրավոր և բանավոր տեղեկացնել իր իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև այդ միջոցի կիրառման պայմանների մասին:

#### **4. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈԻԼԵՐ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ**

Տարբեր երկրներում պրոբացիոն ծառայության հիմնադրման և զարգացման հետ միասին այս ծառայություններն ընդլայնում էին իրենց լիազորությունները՝ ընդգրկելով նոր գործառույթներ՝ սկսած այլընտրանքային պատիժների կատարումից և մեղիացիայից, մինչև քրեական գործերով մինչդատական վարույթի ընթացքում կալանավորմանն այլընտրանք հանդիսացող խափանման միջոցների կիրառման ապահովումը (հսկողության հանձնելը, տնային կալանք):

##### **4.1. Փուլեր**

Չնայած լիազորությունների տարբեր շրջանակների՝ ներկայումս գրեթե բոլոր երկրներում պրոբացիայի ծառայության գործառույթները իրականացվում են ոչ ուժային կառույցների կողմից և հիմնականում իրականացվում են հետևյալ չորս փուլերում՝ մինչդատական պրոբացիա, դատական պրոբացիա, պենիտենցիար պրոբացիա, հետպենիտենցիար պրոբացիա:

Մինչդատական պրոբացիան իրենից ենթադրում է քրեական գործի մինչդատական քննության ընթացքում պրոբացիոն ծառայության կողմից իրականացվող գործառույթները: Այս փուլում պրոբացիոն ծառայությունների կողմից հիմնականում իրականացվում են՝

- մեղադրյալի վերաբերյալ զեկույցների պատրաստում.
- այլընտրանքային խափանման միջոցների իրականացում.
- ազատության մեջ գտնվող մեղադրյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն (Չեխիա, Ֆրանսիա, Լիտվա).
- օժանդանդակություն և աջակցություն.
- ինչպես նաև սոցիալական ծրագրերի իրականացում՝ վերջինի վերասոցիալականացումն ապահովելու նպատակով<sup>39</sup>:

Դատական պրոբացիան ենթադրում է քրեական գործի դատական քննության ընթացքում պրոբացիոն ծառայության կողմից իրականացվող գործառույթները: Այս փուլում պրոբացիոն ծառայության կողմից հիմնականում իրականացվում են՝

<sup>39</sup> Handbook on Probation Services: Guidelines for Probation Practitioners and Managers. United Nations Interregional Crime and Justice Research Institute, Jon Klaus, 1998.

- ամբաստանյալի վերաբերյալ զեկույցի պատրաստում և ներկայացում դատարանին.

- ազատության մեջ գտնվող մեղադրյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն.

- օժանդակություն.

- աջակցություն.

- սոցիալական ծրագրերի իրականացում.

- մեղադրյալի և տուժողի հաշտեցում<sup>40</sup>:

Պենիտենցիար պրոբացիան ենթադրում է դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո պրոբացիոն ծառայության կողմից իրականացվող գործառնությունները: Տվյալ փուլում պրոբացիոն ծառայության կողմից իրականացվում են՝

- դատարանի կողմից նշանակված՝ ազատությունից զրկելու հետ չկապված պատիժները.

- ազատությունից զրկելու հետ չկապված պատժի դատապարտված անձի օժանդակություն ու աջակցություն<sup>41</sup>.

- դատարանի կողմից պատժից ազատված անձանց վարքագծի նկատմամբ վերահսկողություն.

- պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում անձի վարքագծի և դատարանի դատավճռով վերջինի վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ վերահսկողություն.

- դատարանի կողմից կիրառված բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կատարման վերաբերյալ վերահսկողության իրականացում.

- պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատված անձանց վարքագծի նկատմամբ վերահսկողություն, օժանդակություն ու աջակցություն:

Հետպենիտենցիար պրոբացիան ենթադրում է պատժի կրումից հետո մինչև դատվածության մարումը կամ օրենքով սահմանված կարգով դրա հանումը պրոբացիոն ծառայության կողմից իրականացվող գործառնությունները: Տվյալ փուլում պրոբացիոն ծառայության կողմից իրականացվում է՝

- զեկույցի պատրաստում և ներկայացում՝ դատվածությունը հանելու առնչությամբ որոշում կայացնելու իրավասություն ունեցող մարմնին:

Պրոբացիոն ծառայությունն իր մեջ կարող է ընդգրկել նաև այլ գործառնություններ, ինչպես, օրինակ՝ մասնավոր մեղադրանքի գործերով մեղիացիայի անցկացումը և տուժողի ու հանցագործություն կատարած անձի միջև միջնորդությունը<sup>42</sup>:

---

<sup>40</sup> Նույն տեղում:

<sup>41</sup> European Rules on Community Sanctions and Measures: Recommendation No. R (92) 16.

<sup>42</sup> Handbook on Probation Services: Guidelines for Probation Practitioners and Managers. United Nations Interregional Crime and Justice Research Institute, Jon Klaus, 1998.

## **4.2. Գործառնություններ**

### **4.2.1. Զեկույցներ**

Պրոբացիոն ծառայությունների դերակատարության մեջ կենտրոնական դեր զբաղեցնում են *զեկույցները*, որոնք պատրաստվում են պրոբացիոն աշխատակիցների կողմից և դատարանի կամ մինչդատական վարույթն իրականացնող մարմնի կողմից որոշում կայացնելիս հիմնականում հաշվի են առնվում: Մակայն հաշվի առնելը, վերը նշված մարմինների համար, պարտադիր պայման չէ, վերջիններս որոշումներ կայացնելիս ազատ են: Իսկ այսպիսի զեկույցներ ներկայացնելու ժամկետները յուրաքանչյուր երկրում տարբեր են:

Պրոբացիոն ծառայություն իրականացնող մարմիններն իրենց գործառնություններն իրականացնելիս տեղեկատվություն են տրամադրում դատարանին և հետաքննության ու նախաքննության մարմիններին: Տրամադրվող տեղեկատվությունը պետք է բխի հանցագործի ու տուժողի շահերից և տեղեկություն պարունակի հանցագործի վարքագծի հնարավոր փոփոխության և սոցիալական վերաինտեգրման մասին<sup>43</sup>:

Զեկույցներ ներկայացնելու պարտականությունը նախատեսված է նաև Տոկիոյի կանոններով<sup>44</sup>: Կանոնների համաձայն՝ հաշվետվությունը դատական մարմիններին ներկայացնում են դրա համար իրավասու մարմիններն ու պաշտոնյաները: Այն պետք է պարունակի սոցիալական տեղեկություն ու խորհրդատվություն ինչպես հանցագործի, այնպես էլ դատավարության վերաբերյալ: Զեկույցը յուրաքանչյուր դեպքում պետք է լինի օբյեկտիվ, իրական և անկողմնակալ:

Դատավարությունից առաջ պատրաստված զեկույցը տրվում է դատարանի պահանջով: Դրա նպատակը դատավորի կողմից որոշում կայացնելուց առաջ հանցագործի մասին տեղեկություն ունենալն է, ինչն էլ հաշվի է առնվում որոշում կայացնելիս: Զեկույցում պարունակվող տեղեկատվությունը ստացվում է ինչպես անմիջականորեն հանցագործից՝ հարցազրույցների միջոցով, այնպես էլ նրա ընտանիքից, համայնքից, ոստիկանության աշխատակիցներից կամ սոցիալական ծառայություններից: Տեղեկությունը վերաբերում է հանցագործի աշխատունակությանը, կրթությանը, ամուսնական կարգավիճակին, առողջությանը, նախասիրություններին, հանցագործության մանրամասներին, գործադրված բռնության մանրամասներին, հանցանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքին և այլն: Այն սովորաբար ավարտվում է եզրափակիչ դրույթներով, որտեղ կենտրոնական դեր ունեն դատավճռի վերաբերյալ առաջարկություններն ու երաշխավորագրերը:

<sup>43</sup> Handbook on Probation Services: Guidelines for Probation Practitioners and Managers. United Nations Interregional Crime and Justice Research Institute, Jon Klaus, 1998.

<sup>44</sup> UN Standard Minimum Rules for Non-Custodial Measures.



Տեսության մեջ գոյություն ունի կարծիք<sup>45</sup>, որի համաձայն զեկույցում պետք է պարունակվի երկու կարևոր տեղեկություն, ինչը էական նշանակություն ունի դատավորի վճռի վրա: Դրանք են՝ տեղեկություն հանցագործի հանցավոր անցյալի և կատարված հանցանքի բնույթի մասին: Մեկ այլ աղբյուրի համաձայն՝ զեկույցում պարունակվող ամենակարևոր ինֆորմացիան պետք է վերաբերի հանցագործի կրթությանը, ամսական միջին եկամուտին, զբաղվածությանը, բնակավայրին և զինվորական ծառայությանը<sup>46</sup>:

Տոկիոյի կանոններով ևս նախատեսվում է դատավճռի կայացումից հետո զեկույցի պատրաստում: Մասնավորապես կանոնների համաձայն՝ իրավասու մարմինը վճիռը կայացնելուց հետո հանցագործի սոցիալական վերաինտեգրումը խթանելու համար պետք է իր տրամադրության տակ այլընտրանքներ ունենա<sup>47</sup>:

#### **4.2.2. Հսկողություն և վերահսկողություն**

Հաջորդ կարևոր հարցը, որին կանդիդատանք, վերաբերում է հսկողությանը, ինչին յուրաքանչյուր պրոբացիոն ծառայություն իրականացնելու դեպքում մեծ ուշադրություն է դարձվում:

Հսկողություն՝ նշանակում է աշխատանքներ, որոնք սահմանափակվում են՝ պարզելով, թե արդյո՞ք պատժի կամ միջոցի հետ զուգորդվող պայմանները կամ պարտականությունները հանցագործություն կատարած անձի կողմից կատարվում են կամ ապահովում են այդ կատարումը: Այդ աշխատանքները սովորաբար ներառում են պայմանները կամ պարտականությունները չկատարելու դեպքում առավել խիստ պատիժների կամ միջոցների կիրառում կամ դրանց կիրառման սպառնալիք:

«Հսկողություն» հասկացությունն ավելի նեղ է, քան «վերահսկողություն» հասկացությունը<sup>48</sup>: Պրակտիկայում հսկողությանը կապված հիմնական խնդիրներն են. պարզել պրոբացիայի ընթացքում հսկողության անհրաժեշտությունը, պայմանները և ժամանակահատվածը:

Վերահսկողության միջոցների կիրառումը վերաբերում է ինչպես օժանդակության աշխատանքներին, որոնք կատարվում են կատարող մարմնի կողմից կամ վերջինիս անունից, և որոնց նպատակն է հանցագործություն կատարած անձին հասարակությունում պահելը, այնպես էլ այն գործողություններին, որոնք ձեռնարկվում են ապահովելու համար, որ հանցագործություն կատարած անձը կատարի սահմանված բոլոր պայմանները կամ պարտականությունները, այդ թվում, հարկ եղած դեպքում, հսկողությունը:

<sup>45</sup> Critical Issues in Adult Probation, US Department of Justice, 1979.

<sup>46</sup> Decision Making in Criminal Justice, Carter and Wilkins, 1967.

<sup>47</sup> United Nations Standard Minimum Rules for Non-custodial Measures (The Tokyo Rules), G.A. res. 45/110, annex, 45 U.N. GAOR Supp. (No. 49A) at 197, U.N. Doc. A/45/49 (1990).

<sup>48</sup> Recommendation CM/Rec (2010)1 of the Committee of Ministers to member states on the Council of Europe Probation Rules.

Վերահսկողությունը կարող է լինել պարտադիր կամ կամավոր (հանցագործություն կատարած անձի դիմումի համաձայն)<sup>49</sup>:

Վերահսկողությունը չպետք է դիտարկվի սոսկ որպես հսկողական գործառույթ, այլ նաև հանցագործություն կատարած անձանց խորհուրդ տալու, աջակցելու և շահագրգռելու միջոց: Այն պետք է համատեղվի, հարկ եղած դեպքում, դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող կամ այլ մարմինների կողմից ցուցաբերվող միջամտության այլ միջոցների հետ, ինչպես օրինակ՝ վերապատրաստումը, հմտությունների զարգացումը, աշխատանքի հնարավորությունները և բուժումը<sup>50</sup>: Վերահսկողությունը սահմանվում է ազգային օրենսդրությանը համապատասխան և հնարավոր է իրականացնել պրոբացիայից առաջ, դրա կիրառման ընթացքում և հետո: Այն հիմնականում կիրառվում է պայմանական ազատման, պատժի կիրառման հետաձգման և այլ դեպքերում: Հարկ է նշել, որ վերահսկողությունը ոչ միայն իրավախախտների ղեկավարման միջոց է, այլև նրանց օգնելու և խորհուրդներ տալու լավագույն հնարավորություններից մեկը:

Պրակտիկայում տարածված է նաև հանցագործի ընտանիքի անդամների հետ հատուկ աշխատանքներ տանելը: Սա հնարավոր է իրագործել միայն անհրաժեշտության դեպքում՝ անմիջականորեն պրոբացիան իրականացնող ծառայությունների կողմից կամ միջնորդի միջոցով: Նպատակը հանցագործի ընտանիքին աջակցություն ցուցաբերելն է, խորհուրդներ և տեղեկատվություն տրամադրելը:

Պրոբացիայի կիրառման ժամանակ հանցագործի նկատմամբ հնարավոր է նաև հսկողություն սահմանել էլեկտրոնային/տեխնիկական միջոցներով: Սակայն պետք է հաշվի առնել հանցանքի վտանգավորության աստիճանը և կոլեկտիվ անվտանգությանը վնաս հասցնելու ռիսկերը:

#### ***4.2.3. Հանրային աշխատանքներ***

Պրոբացիայի դեպքում իրավախախտի նկատմամբ նշանակվում են որոշ պատժատեսակներ: Այդպիսին կարող է լինել, օրինակ՝ *հանրային աշխատանքը*: Այսպիսի աշխատանքների կատարումը կազմակերպվում է պրոբացիոն ծառայություն իրականացնող մարմինների կողմից և նպատակ ունի հատուցել իրավախախտի կողմից պատճառված վնասները: Այստեղ ևս կարևորելով հանցագործի պատիվն ու արժանապատվությունը՝ հանրային աշխատանքները պետք է այնպիսի բնույթ կրեն, որ չնվաստացնեն վերջինիս: Ավելին, պետք է պայամաններ ստեղծվեն հանցագործի առողջությունն ու հիգիենան ըստ արժանվույն պահելու համար: Արգելվում է այս աշխատանքներ

<sup>49</sup> Recommendation CM/Rec(2010)1 of the Committee of Ministers to member states on the Council of Europe Probation Rules.

<sup>50</sup> Նույն տեղում, կետ 55:

րի կատարումը՝ ի շահ պրոբացիոն ծառայության աշխատակիցների կամ առհասարակ շահույթ ստանալու նպատակով<sup>51</sup>:

#### **4.2.4. Մեդիացիա**

Մեդիացիան ընդհանուր առմամբ բնութագրվում է որպես միջանձնային կոնֆլիկտների հարթման միջոց: Այն վերականգնողական արդարադատության հիմնական ծրագրերից մեկն է<sup>52</sup>:

Տուժող-հանցագործ մեդիացիան վերականգնողական արդարադատության ամենահին տեսակներից մեկն է: Սրա միջոցով մի կողմից բավարարվում են տուժողի պահանջները, մյուս կողմից հանցագործը, այնուամենայնիվ, ենթարկվում է պատասխանատվության: Այն իրագործվում է հիմնականում ոչ մեծ ծանրության հանցագործությունների դեպքում և կարող է կիրառվել ինչպես պետական մարմինների, այնպես էլ հասարակական կազմակերպությունների կողմից: Մեդիացիայի վերաբերյալ որոշ աղբյուրներում կան պնդումներ, որ այն մարդկությանը հայտնի է դեռևս անտիկ ժամանակաշրջանից, և այսօր փոխվել են վերջինիս կիրառման ոլորտներն ու հնարավորությունները<sup>53</sup>: Այս առումով եվրոպական կառույցները և հատկապես Եվրոպայի խորհուրդն առանձնահատուկ կերպով խրախուսեց մեդիացիայի կիրառումը քրեական գործերով՝ այն ամրագրելով անդամ պետություններին ուղղված R (99) 19 առաջարկությամբ<sup>54</sup>:

Նշված առաջարկությունները կիրառվում են բոլոր այն գործընթացներում, որոնց շրջանակներում տուժողին և հանցագործություն կատարած անձին հնարավորություն է տրվում, վերջիններիս ազատ արտահայտված համաձայնությամբ, անկողմնակալ երրորդ անձի (միջնորդի) օգնությամբ, ակտիվ մասնակցելու հանցագործությունից բխող հարցերի լուծմանը: Նշված առաջարկությամբ սահմանվում են նաև մեդիացիայի իրականացման սկզբունքները, մասնավորապես՝

«1. քրեական գործերով միջնորդությունը պետք է բացառապես տեղի ունենա կողմերի ազատ արտահայտված համաձայնությամբ: Կողմերը պետք է իրավունք ունենան այդպիսի համաձայնությունը հետ վերցնելու միջնորդության ցանկացած պահին:

2. միջնորդության ընթացքում քննարկումները գաղտնի են և հետագայում կարող են օգտագործվել բացառապես կողմերի համաձայնությամբ:

3. քրեական գործերով միջնորդությունը պետք է համընդհանուր մատչելի ծառայություն լինի:

<sup>51</sup> Recommendation CM/Rec (2010)1 of the Committee of Ministers to member states on the Council of Europe Probation Rules, art. 47-48.

<sup>52</sup> Handbook on Restorative Justice Programmes, United Nations Office on Drugs and Crime, 2006.

<sup>53</sup> “Probation Works” Málaga, May 2010, “The Role of Victim-Offender Mediation in Probation” Input Workshop 2 (2<sup>nd</sup> series) Leo Van Garssen.

<sup>54</sup> Council of Europe, Mediation in Penal Matters, Recommendation No R(99)19.

4. քրեական գործերով միջնորդությունը պետք է մատչելի լինի քրեական արդարադատության գործընթացի բոլոր փուլերում.

5. միջնորդական ծառայություններին քրեական արդարադատության համակարգում պետք է տրվի բավականաչափ ինքնավարություն»<sup>55</sup>:

Այսօր եվրոպական գրեթե բոլոր երկրներում հաջողությամբ կիրառվում է քրեական գործերով մեղիացիան (օրինակ՝ Ավստրիա, Բելգիա, Դանիա, Չեխիա, Հունգարիա, Նորվեգիա և այլն)<sup>56</sup>: Այն հաճախ կիրառվում է որպես գործի արտադատական լուծում և ավարտվում է դատախազի լիազորությամբ: Այսպիսի երկրներից են՝ Բելգիան, Չեխիան, Հունգարին և այլն<sup>57</sup>:

#### **4.2.5. Հետազատման խնամք (After care)**

Հետազատման խնամքը պրոբացիոն ծառայությունների կողմից, ըստ էության, ոչ շատ հաճախ կիրառվող գործառնություն է: Ինչպես ցույց է տալիս եվրոպական երկրների փորձը՝ այս գործառնությունը փոքր թվով երկրներ են որդեգրել և այն կրում է կամավոր բնույթ: Որպես կանոն՝ եվրոպական գրեթե բոլոր երկրներում պրոբացիոն գործառնություններն ավարտվում են դատապարտյալի պատժի կրման ավարտով: Այնուամենայնիվ, կան երկրներ, որոնց պրոբացիոն ծառայություններն ունեն հետազատման խնամքի գործառնություններ նաև պատժի կրումից ազատվելուց հետո: Ասպիսի երկրներն են Ավստրիան, Խորվաթիան, Հունգարիան, Դանիան, Հյուսիսային Իռլանդիան: Անգլիայում և Ուելսում, Հունգարիայում և Շոտլանդիայում, նախկին դատապարտյալի դիմումի հիման վրա, հետազատման փուլում նրանք կարող են տեղավորվել ցերեկային կենտրոններում, որոնց վերահսկվում և որոշակի աջակցություն են ցուցաբերվում պրոբացիոն ծառայությունների կողմից<sup>58</sup>:

Այնուամենայնիվ, նշված գործառնությունը նախատեսված է ինչպես Եվրոպայի խորհրդի, այնպես էլ Միավորված ազգերի կազմակերպության համապատասխան առաջարկություններով ու կանոններով: Մասնավորապես հետազատման աջակցության վերաբերյալ «վերականգնողական աշխատանք» եզրույթով նախատեսված է նաև անդամ պետություններին ուղղված CM/Rec(2010)1 առաջարկությամբ: Նշված առաջարկությամբ ամրագրված է, որ «...վերականգնողական աշխատանք նշանակում է հանցագործություն կատարած անձին հասարակությանը վերաինտեգրելու գործընթաց՝ կամավոր կերպով և վերջնական ազատվելուց հետո՝ կառուցողական, պլանավորված և վերահսկվող եղանակով: Սույն կանոններում եզրույթը տարանջատվում է «սոցիալա-

<sup>55</sup> Council of Europe, Mediation in Penal Matters, Recommendation No R(99)19.

<sup>56</sup> European Probation Service Systems: A Comparative Overview. Anton M. van Kalmthout and Ioan Durnescu.

<sup>57</sup> “Probation Works” Málaga, May 2010, “The Role of Victim-Offender Mediation in Probation” Input Workshop 2 (2<sup>nd</sup> series) Leo Van Garste.

<sup>58</sup> European Probation Service Systems: A Comparative Overview. Anton M. van Kalmthout and Ioan Durnescu.

կան վերականգնում» եզրույթից, որը վերաբերում է օրենքով սահմանված ազատվելուց հետո ներգրավմանը»<sup>59</sup>:

Ինչպես վերը նշվեց, հետազատման խնամքի գործառույթների մասին է նշված նաև ՄԱԿ-ի «Ազատագրված հետ կապ չունեցող միջոցների վերաբերյալ նվազագույն ստանդարտ կանոններում»: Մասնավորապես նշված կանոններով ամրագրված է, որ պեսզի պատասխանատու մարմիններն իրենց տրամադրության տակ ունենան հետազատման այլընտրանքների մեծ հնարավորություններ՝ խուսափելու համար ինստիտուցիոնալացումից և նպաստելու համար հանցագործություն կատարած անձանց՝ հասարակությունում արագ վերաինտեգրմանը: Բացառությամբ ներման կարգով ազատմանը, մյուս բոլոր դեպքերում ազատման պատրաստվածության պետք է կայացվեն դատապարտյալի դիմումի հիման վրա<sup>60</sup>:

---

<sup>59</sup> Recommendation CM/Rec (2010)1 of the Committee of Ministers to member states on the Council of Europe Probation Rules.

<sup>60</sup> United Nations Standard Minimum Rules for Non-custodial Measures (The Tokyo Rules).

## ԳԼՈՒԽ 2

### 1. ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

#### *1.1. Արդի իրավիճակի նկարագրություն*

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գոյություն չունի պրոբացիայի առանձին ծառայություն, սակայն վերջինիս բնորոշ մի շարք գործառույթներ իրականացնում են ՀՀ քրեակատարողական ծառայության այլընտրանքային պատիժների կատարման բաժինն իր տարածքային բաժանմունքներով և սոցիալական, հոգեբանական ու իրավական աշխատանքներ իրականացնող ստորաբաժանումները՝ քրեակատարողական հիմնարկներում:

Արդեն ավելի քան 10 տարի է, ինչ Հայաստանի Հանրապետության ազատագրման վայրերում գործում են սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքի ծառայությունները (այսուհետ՝ ՍՀԻԱ): ՀՀ քրեակատարողական համակարգում այս ծառայությունների ձևավորումը սերտորեն կապված է համակարգում տեղի ունեցող արմատական փոփոխությունների և վերակազմավորումների հետ, որոնք սկսվեցին նախապատրաստվել դեռևս 1999 թվականից:

Նշված բարեփոխումների արդյունքում նոր ծառայությունում որպես կառուցվածքային ստորաբաժանումներ ստեղծվեցին սոցիալ-հոգեբանական վերականգնման բաժինները: Չնայած այս միավորները ստեղծվեցին նախկին քաղաքական դաստիարակչական բաժինների աշխատակազմի հենքի վրա՝ շարունակելով նախկին որոշ գործառույթների իրականացումը, սակայն գաղափարական առումով դրանք նոր կազմավորումներ էին, քանի որ հիմնված էին այլ գիտատեսական հենքի վրա և ներառեցին տվյալ ոլորտի համար սկզբունքորեն նոր մասնագիտություններ: Այսպիսով, նորաստեղծ միավորները ստեղծման ժամանակահատվածում կոչվեցին սոցիալ-հոգեբանական վերականգնման, ապա՝ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժիններ՝ ներառելով երեք առանձին ծառայություններ և մասնագիտական ուղղություններ՝ սոցիալական աշխատանք, հոգեբանական ծառայություն և իրավական աշխատանք: Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժինները կոչված են գործնականում կյանքի կոչել պատժի կատարման մարդասիրության ու անհատականացման սկզբունքները, ինչն էլ ընկած էր ողջ բարեփոխումների գաղափարական հիմքում:

Բաժնի առջև դրվեցին մի շարք գործառույթներ, որոնց իրականացումը, ըստ էության, պետք է ապահովեր դատապարտյալների ուղղումը, վերականգնումը և հասարակության մեջ նրանց հետագա վերինտեգրման համար կայուն երաշխիքների ստեղծումը: Այս հիմնարար խնդիրն արտացոլվեցին նաև ոլորտը կանոնակարգող ՀՀ արդարադատության նախարարի N 44-Ն հրամանով սահմանված կարգով, որտեղ ամրագրվեց նշված ստորաբաժանումների կողմից իրականացվելիք գործառույթների շրջա-

նակը, մասնավորապես՝ սոցիալական աշխատանք, հոգեբանական աշխատանք, իրավական աշխատանք, արտաքին աշխարհի հետ կապի պահպանման աշխատանքներ և մասնավոր գործառնություններ, ինչպիսիք են կրթական, մարզական, մշակութային, հոգևոր-կրոնական միջոցառումների կազմակերպումը, օգտակար զբաղվածության խթանումը (ստեղծագործական գործունեության խթանում), հասարակական և այլ կազմակերպությունների ներգրավումը համատեղ վերականգնողական ծրագրերում և այլն<sup>61</sup>:

Բարեփոխումների հաջորդ՝ ավելի ուշ փուլում, դատապարտյալների նկատմամբ այլընտրանքային պատիժների կատարման և նրանց ուղղման ու վերականգնման աշխատանքները հասարակությունում իրականացնելու նպատակով 2005 թվականին ստեղծվեցին այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանումները (ԱՊԿԲ)՝ ՀՀ վարչատարածքային բաժանմանը համապատասխան բաժանմունքներով<sup>62</sup>:

Ընդհանրապես այլընտրանքային պատժատեսակները քրեագետների կողմից ներդրվել են, որպեսզի որոշ ոչ ծանր հանցագործությունների դեպքերում իրավախախտներին հնարավոր լինի պաշտպանել ազատազրկման բացասական հետևանքներից՝ պահելով նրանց ընտանիքում և համայնքում՝ միաժամանակ փոխհատուցելով հանրությանը պատճառված վնասը:

Կազմավորված նորաստեղծ ստորաբաժանումների առջև խնդիր դրվեց ապահովել ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված ազատազրկման հետ չկապված պատիժների կիրառումը, դրանք են՝ տուգանքը, որոշակի պաշտոն զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, հանրային աշխատանքները, հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը և գույքի բռնագրավումը: Այնուհետև ՀՀ Կառավարության 2006 թվականի նոյեմբերի 10-ի «Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի տարածքային մարմինների գործունեության կարգը հաստատելու մասին» N1561-Ն որոշմամբ<sup>63</sup> բաժնի առջև դրվեցին նաև հետևյալ խնդիրները՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու հետևանքով փորձաշրջանի մեջ գտնվող դատապարտյալների նկատմամբ վերահսկողություն, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված անձանց նկատմամբ վերահսկողություն,

---

<sup>61</sup> <http://www.arlis.am>, ՀՀ արդարադատության նախարարի 30.05.2008թ. N 44-Ն հրաման «Կալանավորվածների եվ դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության» կարգը հաստատելու մասին, կետ 4:

<sup>62</sup> <http://www.arlis.am>, ՀՀ կառավարության 26.10.2006թ. «Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի տարածքային մարմինների գործունեության կարգը հաստատելու մասին» N 1561-Ն որոշում:

<sup>63</sup> <http://www.arlis.am>, ՀՀ կառավարության 26.10.2006թ. «Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի տարածքային մարմինների գործունեության կարգը հաստատելու մասին» N 1561-Ն որոշում:

հղի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց նկատմամբ վերահսկողություն, որոնց նկատմամբ կիրառվել է պատժի կրման հետաձգում:

### ***1.2. Որակական հետազոտության մեթոդաբանություն և արդյունքներ***

Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության ներդրման կարիքների ուսումնասիրման և առկա հնարավորությունները գնահատելու նպատակով սույն ծրագրի շրջանակներում իրականացվել է որակական հետազոտություն: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ պրոբացիայի ծառայության որոշ գործառույթներ այսօր մասնակիորեն կատարվում են քրեակատարողական ծառայության վերը նշված ստորաբաժանումների կողմից, ուստի խորին հարցազրույցներ են իրականացվել ՀՀ արդարադատության նախարարության «Էրեբունի» քրեակատարողական հիմնարկում և քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնում: Հետազոտության խմբում ընդգրկվել են նաև փորձագետներ հետևյալ ոլորտներից՝ ՀՀ արդարադատության նախարարություն, քրեակատարողական վարչության սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բաժիններ, ՀՀ գլխավոր դատախազություն, փաստաբանների պալատ, «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ: Ընդհանուր առմամբ հետազոտության մեջ ընդգրկվել են 37 ազատագրված տեսքով պատիժ կրող դատապարտյալներ և ոլորտի 17 պաշտոնյաներ: Քրեակատարողական հիմնարկի ընտրությունը պայմանավորված է եղել ինչպես Երևան քաղաքում նրա տեղակայումով, ինչը տվել է հնարավորինս ժամանակ խնայելու հնարավորություն, այնպես էլ այդ հիմնարկում պահվող դատապարտյալների՝ հիմնականում առաջին անգամ դատապարտված լինելու հանգամանքով, որոնց հետ իրականացվող ուղղիչ աշխատանքների արդյունավետությունն առավել ցայտուն կարող է ներկայացնել նրանց հետ իրականացվող սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների բնույթը:

Հաշվի առնելով դատապարտյալների անձնական գործերին ծանոթանալու ՀՀ օրենսդրության սահմանափակումը և դատապարտյալների անհատական քարտերն ուսումնասիրելու հարցում ուղղված Քրեակատարողական ծառայության զգուշավորությունը՝ հետազոտության համար անհրաժեշտ տեղեկատվությունը հավաքվել է հիմնականում դատապարտյալների հետ վերականգնողական աշխատանքներին առնչվող նորմատիվ ակտերի վերլուծության և դատապարտյալների հետ իրականացված խորին հարցազրույցների մեթոդով՝ պահպանելով տեղեկացված համաձայնության ու անանունության սկզբունքները:

Այլընտրանքային պատիժների կատարման (ԱՊԿ) բաժինների գործունեության հետազոտությունը վկայում է, որ ներկայումս այս բաժինների գործունեությունը դեռևս զարգանալու կարիք ունի: «Հանրային աշխատանքներ» պատժատեսակը կատարելիս, որպես կանոն, հիմնականում որոշ աշխատանքներ են տարվում աշխատատեղի



հայտնաբերման և դատապարտյալների կողմից կատարվող աշխատանքի վերահսկման ուղղությամբ: Իսկ բուն իրավախախտման պատճառների բացահայտման և դրանց հաղթահարման ուղղությամբ աշխատանքները դեռևս անբավարար են: Սակայն, ինչպես ազատագրկման տեսքով պատժատեսակները, այլընտրանքայինի դեպքում նույնպես պատժի հիմնական գործառնություններից մեկը դատապարտյալի ուղղումն է: Իսկ դա նշանակում է, որ պատիժը կրելու ընթացքում դատապարտյալն իր կարիքներին համապատասխան պետք է ներգրավված լինի ուղղիչ և վերականգնողական ծրագրերի մեջ: Այս առումով հանրային աշխատանքներին դատապարտելու պատիժը սահմանվում է միայն մեղադրյալի համաձայնությամբ, ինչը թույլ է տալիս ակնկալել, որ նա ցանկություն ունի կատարել որոշակի ներանձնային և վարքային փոփոխություններ, և մասնագետներին ավելի հեշտ է նրա վարքում փոփոխություններ կատարելը:

Այլընտրանքային պատիժների իրականացման բաժիններից ընտրված փորձագետները, որպես կանոն, նշում են հանրային աշխատանքներ առաջարկելու սահմանափակ հնարավորությունները: Սովորաբար իրենց տրվում է ցանկ, թե ուր կարելի է դատապարտյալին ուղարկել աշխատանքի, իսկ նշված ցանկն ընտրության մեծ հնարավորություն չի տալիս: Փորձագետների հավաստմամբ՝ հանրային աշխատանքներ պատժատեսակը կատարելիս այս ստորաբաժանումը հիմնականում զբաղված է դատապարտյալին աշխատանքի տեղավորմամբ: Հնարավորին չափով հետևում են, որպեսզի դատապարտյալը սահմանված ժամին անցնի աշխատանքի: Աշխատանքներն ընտրվում են առկա ցանկից, որը, նրանց հավաստմամբ, լիարժեք չէ: Աշխատակիցներն ընտրում են տվյալ անձի համար հնարավորինս համարժեք աշխատանք՝ կախված սեռից, ֆիզիկական վիճակից և տարիքից: Աշխատանքի նկատմամբ հսկողությունը, որպես կանոն, հանձնվում է գործատուին, իսկ ստորաբաժանման աշխատակիցներն ամիսը մեկ կամ երկու անգամ այցելում են գործատուին, հետաքրքրվում դատապարտյալի աշխատանքի արդյունավետությամբ ու որակով: Հիմնական խնդիրը, փորձագետների հավաստմամբ, ծառայողական տրանսպորտային միջոցների բացակայությունն է, որի պատճառով չեն կարողանում առավել հաճախ հսկել դատապարտյալի աշխատանքը:

Հետազոտության արդյունքները վկայում են, որ թեև դատապարտյալի աշխատանքի տեղավորման հարցը կարևոր խնդիր է, սակայն փորձագետների կողմից ոչինչ չի նշվում շահառուների կարիքների գնահատման, նրանց քրեական վարքագծի հաղթահարման նպատակով իրականացվող աշխատանքների մասին: Այս առումով անհրաժեշտ են գնահատման գործիքներ ու մեխանիզմներ՝ գնահատելու համար անձի վարքն ու վտանգավորության աստիճանի փոփոխությունը դատապարտվելիս և աշխատանքի անցնելու պահին, պատժի կրման ընթացքում և պատժից ազատվելիս: Այս առումով պետք է թերևս փաստել, որ փաստաթղթերի հետազոտության, ինչպես նաև փորձագիտական հարցումների արդյունքները ևս վկայում են, որ վերը նշված աշխա-

տանքների և գնահատումների մասին ոչինչ չի նշված նաև այս ոլորտը կարգավորող ՀՀ կառավարության որոշման մեջ<sup>64</sup>: Ասել է թե՛ այս դեպքում, պատժի նպատակների իրագործման ուղղությամբ, չկան նույնիսկ ենթաօրենսդրական կարգավորումներ:

Հանրային աշխատանքներին դատապարտելը, ինչպես նաև ազատազրկման մյուս այլընտրանքները հիմնված են այն հումանիստական գաղափարի վրա, որ անհատին օրինապահ վարքին կրկին վերադառնալու հնարավորություն տրվի: Հանրային աշխատանքը պետք է լինի ուղղակի միջոց, որպեսզի մասնագետները կապ պահպանեն դատապարտյալի հետ՝ նրան թողնելով իր ընտանիքում և համայնքում՝ վերահսկելով նրա սոցիալական կապերը, հզորացնելով նրա կարողությունները, նպաստելով նրա վերականգնմանն ու վերաինտեգրմանն իր համայնքում և հասարակությունում ընդհանուր առմամբ:

Փորձագետների պատասխաններում պատժի այս գործոնն ընդհանրապես ուշադրության չի արժանացել:

Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկվելու ձևով պատժված անձինք նույնպես այլընտրանքային պատիժների իրականացման բաժինների շահառուներ են: Սակայն, հարցվողների կարծիքով, նման պատժի արժանացած մարդկանց հետ ուղղիչ ու վերականգնողական աշխատանք տանելու անհրաժեշտություն չկա:

*«...Դե, այս դեպքում ի՞նչ աշխատանք պետք է տարվի: Հիմնականում եթե իրենց զրկում են, ասենք, վարորդական իրավունքից, իրենք չեն էլ կարող զբաղվել, քանի որ վարորդական վկայականը վերցնում են, մենք էլ աշխատանք չենք տանում իրենց հետ»*, - ասում է փորձագետներից մեկը:

Մեկ այլ փորձագետ նշում է. *«Մարդուն զրկել են պաշտոնից, ի՞նչ վերականգնողական աշխատանք պետք է տարվի, պետք է միայն հետևենք, որ արգելված գործունեությամբ չզբաղվի»*:

Նույնն է վիճակը նաև փորձաշրջանում գտնվողների և պայմանական վաղաժամկետ ազատվածների վարքի նկատմամբ վերահսկողության դեպքում: Հարցվողները խոստովանում են, որ ոչ մի աշխատանք էլ չի տարվում այս դատապարտյալների հետ. *«Ոչ մի աշխատանք էլ չի տարվում: Ամիսը 3-4 անգամ դատապարտյալներին կանչում ենք մեզ մոտ, գալիս են, ներկայանում, ստորագրում, գնում»*-ասում են փորձագետները:

Ընդհանուր առմամբ, այս ստորաբաժանման աշխատանքների արդյունավետության գնահատումը դեռևս վաղ է: Այս ոլորտում դեռ առկա են իրավական դաշտի անճշ-

<sup>64</sup> <http://www.arlis.am>, ՀՀ կառավարության որոշումը ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի տարածքային մարմինների գործունեության կարգը հաստատելու մասին:

տություններ, անկատարություններ, որոշ դեպքերում՝ նաև հակասություններ ու բացթողումներ:

Այս առումով փորձագետներից մեկը մատնանշում է պատժի չկրած մասի փոխարինման անարդյունավետության ու այս առումով իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության մասին: «...Օրինակ, երբ որպես այլընտրանքային պատիժ դատապարտյալի նկատմամբ նշանակվում է տուգանք, սակայն դատապարտյալը մի մասը վճարելուց հետո խնդրում է չվճարած մասին համապատասխան պատիժը փոխարինել հանրային աշխատանքով: Այս առումով օրենքով չի սահմանված, որ անձի պատիժը կարող է փոխարինվել չկրած մասի չափով, ուստի, միևնույնն է, պետք է աշխատի նույն չափով, որքան որ պետք է աշխատեր առանց տուգանքի մի մասը վճարելու: Այս պարագայում ուղղակի անհմաստ է դառնում պատժի չկրած մասի փախարինման երևույթը»:

Բաժինների ստեղծման օրվանից սոցիալական աշխատողի և հոգեբանի հաստիքներ առհասարակ չեն նախատեսվել և այսօր էլ գոյություն չունեն, այն դեպքում, երբ ոլորտը կանոնակարգող կառավարության որոշմամբ, չնայած բավականին անկատար ու թերի, այնուամենայնիվ, ամրագրված են գործողություններ, որոնք ուղղակիորեն պահանջում են համապատասխան մասնագետների գիտելիքներն ու հմտությունները (անձնական գործերում անձի մասին տվյալներ, բնութագրեր, անհատական աշխատանքներ և այլն):

Այս առումով պետք է փաստել նաև, որ, թեև բաժնի գործունեությունը կանոնակարգող ՀՀ կառավարության որոշմամբ հստակ չեն նշվում սոցիալական աշխատող կամ հոգեբան մասնագետների անհրաժեշտությունն ու նրանց գործառույթները, այնուամենայնիվ նման գործառույթներ նախատեսված են ՀՀ արդարադատության նախարարի N 44-Ն հրամանով սահմանված կարգով<sup>65</sup>:

Փորձագետները սոցիալական աշխատողի և նրա մասնագիտական գործունեության մասին ունեն շատ աղոտ ու անորոշ պատկերացումներ: Նույնիսկ ասվում է՝ շատ ավելի լավ է, որ իրավաբաններն են գործը վարում, որովհետև նրանք ավելի լավ գիտեն օրենսդրությունը, իսկ սոցիալական աշխատողները չեին կարողանա: Հոգեբանի և սոցիալական աշխատողի մասնագիտական միջամտությունը հաճախ կարևորվում է անչափահասների հետ աշխատանքում, որպեսզի այցելեն ուսումնական վայրեր, կատարեն տնայցեր, բնակության վայր, դիտարկեն նրանց առօրյան և այլն:

Փորձագետները վկայում են, որ դատապարտյալների գործի վարման ընթացքում խնդիրներ ևս չեն առաջանում: Չնայած սոցիալական գործի վարումը պահանջում է

---

<sup>65</sup> <http://www.arlis.am>, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից 30 մայիսի 2008թ. հաստատված N 44-Ն հրաման, գլուխ 5:

հատուկ գիտելիքներ և հմտություններ, և հայտնի չէ, թե այլընտրանքային պատիժների կատարման բաժնի աշխատակիցները որքանով են տիրապետում դրանց:

Մյուս խնդիրը, որ նկատվում է այդ ծառայություններում, սոցիալական ծառայությունների հետ համագործակցության գրեթե բացակայությունն է, հատկապես զբաղվածության ծառայությունների հետ: Հարցվողներից որևիցե մեկը չկարևորեց, որ դատապարտյալներին կարելի է ուղարկել վերը նշված ծառայությունների (կամ այլ ծառայությունների) կողմից կազմակերպվող վերապատրաստման դասընթացների, որպեսզի նրանք հետագայում մրցունակ լինեն աշխատաշուկայում:

Սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների (ՍՀԻԱ) ստորաբաժանումների ուղղությամբ որակական հետազոտության շրջանակներում վերլուծության են ենթարկվել հիմնականում այն գործառույթները, որոնք հետագայում, մեր գնահատմամբ, կարող են լինել պրոբացիայի ծառայության և քրեակատարողական հիմնարկների ՍՀԻԱ բաժինների միջև համագործակցության եզրակետում (մասնավորապես դատապարտյալների ուղղման անհատական ծրագրերի կազմում, վարքի գնահատումներ ու բնութագրում, դատապարտյալի պատժից ազատման ծրագրի կազմում, աջակցություն), եթե այս ոլորտը կառուցվածքային այլ փոփոխությունների չենթարկվի:

Այսպես, ոլորտը կարգավորող ՀՀ արդարադատության նախարարի N 44-Ն հրամանով սահմանված կարգով<sup>66</sup>, պատժի կրման առաջին ամիսներին կազմվում է դատապարտյալի ուղղման գործընթացի ծրագիրը, որը թերևս կարելի է համարել պատժի կրման ընթացքում կարևորագույն փաստաթղթերից մեկը: Այս ուղղությամբ հետազոտության արդյունքները վկայում են, որ իրենց ուղղման ծրագրի մասին հարցվող դատապարտյալները ոչ մի տեղեկատվություն չունեն: Եվ չնայած վերը նշված իրավական ակտով հստակ չի սահմանվում դատապարտյալի կողմից իր ուղղման ծրագրին մասնակցելու կամ, նվազագույնը, տեղյակ լինելու հանգամանքը, այնուամենայնիվ կարելի է եզրակացնել, որ դրա կազմումը որոշակի առումով ձևական բնույթ է կրում: Իրականում հոգեբանը և սոցիալական աշխատողը պետք է դատապարտյալի խնդիրները բացահայտեն և կազմեն ուղղման պլան, հենց շահառուի հետ համագործակցության միջոցով: Այստեղ պետք է փաստել նաև, որ նկատվում է դատապարտյալի վարքի գնահատման հստակ չափորոշիչների մշակման և գնահատումների հստակ մեխանիզմի ներդրման անհրաժեշտություն:

Փորձագետների խոստովանությամբ այս գործընթացում առկա է հոգեբան և սոցիալական աշխատող մասնագետների վերապատրաստումների անհրաժեշտությունը:

<sup>66</sup> <http://www.arlis.am/>, ՀՀ արդարադատության նախարարի հրամանը «կալանավորվածների և դատապարտյալների հետ սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքներ իրականացնող կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության» կարգը հաստատելու մասին:

Բարելավման կարիք ունեն նաև դատապարտյալների ազատման նախապատ-  
րաստման ծրագիրը կազմելու, առավել ևս դատապարտյալներին պատժից պայմանա-  
կան վաղաժամկետ ազատման կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսա-  
կով փոխարինման ներկայացման համար իրականացվող գնահատումները և այլ գոր-  
ծընթացները: Մանսավորապես իրականացված հետազոտությունները վկայում են, որ  
այս փուլում գտնվող դատապարտյալները դարձյալ ոչինչ չգիտեն իրենց վերականգն-  
ման ծրագրի մասին: Բաժնի աշխատակիցների հետ հանդիպումներ հիմնականում չեն  
հիշատակվում, բացառությամբ առանձին դեպքերի՝ այս կամ այն փաստաթղթի ձեռք  
բերման առնչությամբ: Հարցված դատապարտյալների պատասխաններից ոչ մի կերպ  
հնարավոր չէ զգալ, որ նրանց պատժից պայմանական վաղաժամկետ ազատումը ինչ-  
որ առումով կապված է ՍՀԽ Բաժնի հետ համագործակցությունից: Այս առումով անհ-  
րաժեշտություն է նկատվում նաև դատապարտյալներին պատժից պայմանական վա-  
ղաժամկետ ազատման կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փո-  
խարինման ներկայացման համար վերջիններիս վարքի գնահատման առանձին, հա-  
մընդհանուր չափորոշիչների ստեղծման և վարքի գնահատման հստակ մեխանիզմի  
ներդրման ուղղությամբ: Յուրաքանչյուր դատապարտյալ, կարծում ենք, պետք է  
հստակ տեղյակ լինի իր պատժից հնարավոր պայմանական վաղաժամկետ ազատման  
համար անհրաժեշտ այն քայլերի մասին, որ պետք է ինքը ձեռնարկի պատժի կրման  
ողջ ժամանակահատվածում: Ավելին, այս քայլերի իրականացման համար դատա-  
պարտյալը պետք է վերը նշված չափորոշիչների մասին տեղեկանա դեռևս հիմնարկ  
մուտք գործելու առաջին օրերի ընթացքում: Նա պետք է հստակ գիտակցի իր ակտիվ  
դերը նշանակված պատժից վաղաժամկետ ազատվելու հավանականության գործում:  
Ինչ վերաբերում է վարքի գնահատման մեխանիզմներին, ապա հստակ չափորոշիչնե-  
րի առկայության դեպքում, կարծում ենք, պետք է լինեն այդ չափորոշիչների և դատա-  
պարտյալի վարքի համապատասխանության գնահատման գործիքներ, գնահատման  
ժամանակահատվածներ և կոնկրետ եղանակներ, որոնք կձևավորեն գնահատման  
միանման մեխանիզմ: Այս առումով, ինչպես նշում են նաև հարցված փորձագետները,  
անհրաժեշտ են դիպլոմավորված սոցիալական աշխատողներ: Նրանց պարտակա-  
նություններն այսօր իրականացնում են որոշ վերապատրաստումներ անցած այլ մաս-  
նագետներ: Անհրաժեշտ են նաև ուղղիչ ու վերականգնողական կոնկրետ խնդիրներ  
լուծող մշակված ու հղկված ծրագրեր:

Իրականացված որակական հետազոտության արդյունքներն ընդհանուր առ-  
մամբ վկայում են, որ անելիքները դեռ շատ կան, և անհրաժեշտ է մասնագիտական և  
ինստիտուցիոնալ զարգացման ճանապարհ անցնել:

Հետազոտության արդյունքների վերլուծությունից կարող ենք հանգել այն համոզ-  
ման, որ դեռևս 90-ական թվականներից սկիզբ առած քրեակատարողական ոլորտի բա-  
րեփոխումները և այդ շրջանակներում 2001 թվականին, այնուհետև 2005 թվականին

հիմնադրված սոցիալական, հոգեբանական և իրավական ու այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանումները նորովի մոտեցման ու նոր փոփոխությունների կարիք ունեն։ Բարեփոխումների ու կատարելագործման կարիք ունեն ինչպես նշված ոլորտները կանոնակարգող իրավական ակտերը, այնպես էլ մարդկային ու տեխնիկական ռեսուրսները։

## **2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ**

Վերը ներկայացված հետազոտության արդյունքների վերլուծությունից հանգում ենք այն եզրակացության, որ Քրեակատարողական ծառայության սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների ստորաբաժանումներն այսօր բավարար արդյունավետությամբ չեն գործում։ Կան մի շարք իրավական, կազմակերպչական ու մասնագիտական ռեսուրսների բարելավման խնդիրներ, որոնց լուծումն այսօր խիստ հրատապ է դարձել։ Ընդհանուր առմամբ, կարծում ենք, այս բաժինների զարգացման համար նոր ռազմավարություն մշակելու և կյանքի կոչելու անհրաժեշտություն է հաստանալ։

Ինչ վերաբերում է այլընտրանքային պատիժների կատարման ստորաբաժանմանը, ապա կարծում ենք՝ այն այսօր պետք է լիովին բարեփոխել և վերակառուցել։ Այս առումով հիմնավորված է մեկ մասնագիտացված կառույցի ստեղծումը, որը, համագործակցելով ազատազրկման ձևով պատիժ կատարող հիմնարկի մասնագիտական անձնակազմի հետ, կիրականացնի ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված այլընտրանքային պատիժների կատարումը և հանցագործություն կատարած անձի վերականգնման և վերախնտեզման երաշխիքների ստեղծման գործառնությունները։

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ անձի դիրքորոշումներն ու արդարադատության նկատմամբ վերաբերմունքը ձևավորվում, և նրա վերախնտեզման և վերասոցիալականացման հիմքերը դրվում են դեռևս նախաքննական շրջանում, ուստի անհրաժեշտ է նույնանուն բազմամասնագիտական միջամտություն ցուցաբերել ոչ միայն արդեն դատապարտված անձի, այլև կասկածյալի/մեղադրյալի և տուժողի նկատմամբ՝ հենց նախաքննական փուլից սկսած։ Այս առումով միջազգային պրակտիկան վկայում է, որ նշված գործառնությունները լավագույնս իրականացվում են պրոբացիայի ծառայությունների կողմից։

Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության ներդրման անհրաժեշտությունը բխում է նաև քրեակատարողական հիմնարկների գերծանրաբեռնվածության խնդրից։ Ներկայումս, ինչպես մինչդատական վարույթի ընթացքում կալանավորված, այնպես էլ ազատազրկման դատապարտված անձինք պահվում են գերծանրա-

բեռնված հիմնարկներում: Այս խնդիրը բազմիցս բարձրաձայնվել է նաև խոշտանգումների կանխարգելման Եվրոպական կոմիտեի կողմից ներկայացված գեկույցներում<sup>67</sup>:

Կարևորելով քրեակատարողական ծառայության բարեփոխումների անհրաժեշտությունը և այդ համատեքստում պրոբացիայի ծառայության ստեղծումն ու վերջինիս հետ համագործակցությունը, այնուամենայնիվ, մեր երկրում պրոբացիայի ծառայության ստեղծումը հիմնավորվում է նաև Հայաստանի Հանրապետության դատական պրակտիկայով:

Ուսումնասիրությունները վկայում են, որ քրեական գործերի մինչդատական քննության փուլում մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվում է մեծամասամբ կալանավորումը: Որպես որոշումների հիմնավորում՝ մեծամասամբ նշվում է մեղադրյալի կողմից քննությունից խուսափելը, կամ վերջինիս խոչընդոտելը, ապացուցողական տվյալների վրա ազդեցությունը, նոր իրավախախտումների կատարման հավանականությունը: Այս առումով հատկանշական է նաև այն հանգամանքը, որ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու դեպքում, որպես կանոն, ամբաստանյալը չի խուսափում ազատագրվում պատժատեսակից և ստացվում է այնպես, որ հանցանք կատարած անձանց նկատմամբ դատարանների կողմից նշանակվող պատժատեսակը գերազանցապես ազատագրվում է: Այսպես, 2010 թվականի ընթացքում դատարանների կողմից քննված քրեական գործերի 20 տոկոս դեպքերում է, որ ազատագրվման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, ցածր է նաև ազատագրվման հետ չկապված պատիժների նշանակման տոկոսը: Ուսումնասիրված 2446 ամբաստանյալի նկատմամբ նշանակված պատիժները՝ ազատագրվումը որպես պատժատեսակ կիրառվել է 1792 (73.3%) ամբաստանյալի նկատմամբ: Այս պատժատեսակով պատժաչափի միջին տևողությունը կազմել է 38.3 ամիս: Առավելագույն պատժաչափը կազմել է 15 տարի և կիրառվել է երկու ամբաստանյալի նկատմամբ: Դատարանի կողմից պատիժը պայմանականորեն չի կիրառվել 506 ամբաստանյալի նկատմամբ, ինչը կազմում է ամբաստանյալների ընդհանուր թվի 20.7%-ը<sup>68</sup>:

Նման պայմաններում պրոբացիայի ծառայության ներդրումը կնպաստի ինչպես դատարանների կողմից ազատությունից զրկելու հետ կապված պատիժների անհարկի նշանակման, այնպես էլ մեղադրյալների նկատմամբ կալանավորումը՝ որպես խափանման միջոց ընտրելու դեպքերի նվազմանը և կնվազեցի քրեակատարողական հիմնարկների գերբնակեցվածությունը:

Բացի այդ, պրոբացիայի ծառայությունն ապացուցել է իր տնտեսական արդյունավետությունը կիրառության բոլոր ձևերում և մոդելներում: Միանշանակ է, որ անձին

<sup>67</sup> <http://www.cpt.coe.int/en/states/arm.htm>.

<sup>68</sup> Զեկույց. Պատժողական քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում., «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» Հասարակական կազմակերպություն, Երևան, 2010:

ազատությունից զրկելով՝ պետությունը որոշակի նյութական միջոցներ է ծախսում նրան պահելու համար: Եթե հասարակության անվտանգությունը կարող է լինել առավել վտանգված, ապա հանրությունը նախընտրում է ազատագրվումը: Սակայն, եթե անձի վտանգավորության չափը չի ազդում համընդհանուր անվտանգության վրա, ապա ընդհանուր հասարակական շահը պահանջում է, որպեսզի նա կրի այլընտրանքային պատիժ՝ զերծ մնալով ազատգրկման ազդեցությունից և հետևանքներից: Հանցագործություն կատարելով՝ անձն արդեն իսկ որոշակի վնաս է հասցնում պետությանը, իսկ ազատագրվամբ ոչ միայն չի հատուցվում այդ վնասը, այլև հասարակությունը շարունակում է հարկեր վճարել պետությանը, որպեսզի վերջինս պահի դատապարտյալներին:

Այսպիսով, եթե խնդիրը նաև տնտեսական հիմնավորման տեսանկյունից դիտարկվի, ապա Հայաստանը՝ որպես սահմանափակ ռեսուրսներ, այդ թվում՝ բնակչություն ունեցող երկիր, չի կարող իր վրա վերցնել պատժի այնպիսի անարդյունավետ տեսակ, ինչպիսին ազատագրվումն է և կիրառել հանցագործությունների 90 տոկոսից ավելիի նկատմամբ:

Միևնույն ժամանակ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող դատաիրավական բարեփոխումների շրջանակներում նոր քրեական և քրեական դատավարության օրենսգրքերի ընդունումը ևս (ինչը պայմանավորում է նաև փոփոխություններ քրեակատարողական օրենսգրքում) հանգեցնում է պրոբացիոն ծառայության ստեղծման անհրաժեշտության: «ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի մշակման» հայեցակարգով նախանշված մի շարք փոփոխությունների արդյունավետ իրականացումը մեծապես պայմանավորված է այս ծառայության ստեղծմամբ (օրինակ՝ նոր այլընտրանքային խափանման միջոցների, մեղիացիայի ինստիտուտի ներդրումը):

### **3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐԴՐՎԵԼԻՔ ՊՐՈԲԱՑԻԱՑԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

#### ***3.1. Ընդհանուր նկարագիրը***

Ըստ հաստատված իրավական և դատական բարեփոխումների 2012-2016թթ ռազմավարության և դրանից բխող միջոցառումների պահանջների՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ենթակայությամբ պետք է ստեղծվի Պրոբացիայի ծառայությունը՝ անջատ քրեակատարողական ծառայությունից:

Ծառայությունը պետք է լինի ոչ զինվորական (ոչ ուժային) կառույց: Այսպիսով, ծառայության կազմակերպարավական տեսակի խնդրի լուծման ուղղությամբ առաջարկվում է նվազագույնը երկու լուծում, մասնավորապես՝

1) պրոբացիայի ծառայությունը գործում է որպես վարչություն կամ նախարարության առանձնացված ստորբաժանում՝ համալրվելով քաղաքացիական ծառայողներ-



րով: Հաշվի առնելով այն հանգամանքները, որ ապագա պրոբացիայի ծառայությունն օժտված է լինելու լիազորությունների բավականին լայն շրջանակով, և այդ լիազորություններն իրականացվելու են մասնագետների մեծ թիմով, ուստի այդ մասնագետները պետք է բավարար վարձատրվեն: Այս դեպքում, քաղաքացիական ծառայության, բոլոր արտոնություններով հանդերձ, առաջին խնդիրը, որ կարող է առաջանալ, առնչվում է քաղաքացիական ծառայողների դրամական բավարարման համակարգին: Աշխատավարձային ֆոնդի խիստ սակավ լինելը կարող է խոչընդոտել պրոբացիայի ծառայության համար բարձրորակ մասնագետների հավաքագրման և կադրերի ընտրության գործընթացներին:

2) Պրոբացիայի ծառայությունը գործում է որպես պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ), ինչը հնարավորություն կտա ունենալ սեփական բյուջե և արտաբյուջե, աշխատակիցներին տրամադրել բարձր աշխատավարձեր: Այս լուծման պարագայում կլուծվի նաև արտաքին ֆինանսավորում ստանալու և բյուջետային ծախսերը թեթևացնելու խնդիրները՝ ներգրավելով մասնավորապես միջազգային, դոնոր կազմակերպություններ: Նշված արտաքին ֆինանսական ռեսուրսները տնօրինելու միջոցով կարող է լուծվել նաև ՊՈԱԿ-ի կողմից տարբեր հասարակական կազմակերպություններին պրոբացիայի որոշ գործառույթներ պատվիրակելու և նրանց ֆինանսավորելու խնդիրը:

Անկախ կազմակերպաիրավական տեսակի խնդրի լուծման եղանակներից՝ Պրոբացիայի ծառայությունը պետք է բաղկացած լինի կենտրոնական մարմնից և տարածքային ստորաբաժանումներից, որոնք պետք է տեղակայված լինեն ՀՀ վարչատարածքային բաժանմանը համապատասխան:

Պրոբացիայի ծառայության մասնագիտական գործառույթներն իրականացնելու նպատակով (մասնավորապես վերահսկողության ընթացքում նախնական գնահատում, պլանավորում, մասնագիտական միջամտություն<sup>69</sup>), նախընտրելի է որպեսզի ծառայության աշխատակազմում ընդգրկված լինեն սոցիալական, մանկավարժական, հոգեբանական գիտությունների, իրավագիտության ոլորտների գիտական կամ գործնական փորձ ունեցող մասնագետներ, իսկ այլ մասնագետներն անցնեն համապատասխան վերապատրաստումներ: Այնուամենայնիվ, անկախ մասնագիտացումներից, պետք է ապահովել, որպեսզի անհատական դեպքերը վարվեն համապատասխան կոմպետենտությամբ և անհրաժեշտության դեպքում, հանցագործություն կատարած անձանց տրամադրվի հոգեբանական և սոցիալական աջակցություն<sup>70</sup>:

Պրոբացիայի ծառայությունում պետք է գործի անչափահասների գործերով առանձին ստորաբաժանում, որը պետք է զբաղվի անչափահասների առնչությամբ

<sup>69</sup> Recommendation CM/Rec (2010)1 of the Committee of Ministers to member states on the Council of Europe Probation Rules, Part V.

<sup>70</sup> United Nations Standard Minimum Rules for Non-custodial Measures (The Tokyo Rules) 10.3, 10.4.

պրոբացիայի ծառայության լիազորությունների իրականացմամբ: Անչափահասների գործերով բաժնում պետք է ներգրավվեն հատուկ մասնագիտացում ունեցող մասնագետներ՝ պրոբացիոն ծրագրերում անչափահաս օրինախախտների սոցիալական, իրավական, հոգեբանական և մտավոր առանձնահատկությունները հաշվի առնելու նպատակից ելնելով:

Պրոբացիայի ծառայության լիազորությունների պատշաճ իրականացման համար աշխատանքներին պետք է ներգրավել նաև տեղական ինքնակառավարման մարմիններ, հասարակական և մասնավոր կազմակերպություններ, ինչպես նաև կամավորներ: Հասարակական կազմակերպությունների և կամավորների ներգրավումը և նրանց հետ համագործակցությունը կնպաստեն պրոբացիայի ծառայության ծանրաբեռնվածության նվազեցմանը, համապատասխան ոլորտի մասնագետների և ֆինանսական միջոցների սակավության խնդրի լուծմանը՝ դրանով իսկ նպաստելով պրոբացիայի ծառայության պատշաճ որակի ապահովմանը:

Պրոբացիայի ծառայությունն իր գործունեության ընթացքում պետք է սերտ համագործակցի նաև պետական մարմինների հետ, որոնք կարող են դասակարգվել երկու տեսակի՝ պրոբացիոն ծառայության շահառուներ և պրոբացիոն ծառայությանը հնարավոր ծառայություններ մատուցողներ:

Առաջին խմբի մարմիններն են դատարանները, դատախազությունը, ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչությունը, որոնց քրեական դատավարության վարույթի տարբեր փուլերում Պրոբացիոն ծառայությունն օժանդակում է իրենց լիազորությունների իրականացմանը:

Երկրորդ խմբի մարմիններն են պետական կրթական հաստատությունները, տեղական ինքնակառավարման մարմինները, խնամակալության և հոգաբարձության մարմինները, սոցիալական ծառայությունները:

Ներկայումս գրեթե բոլոր եվրոպական երկրներում<sup>71</sup> պրոբացիայի ծառայության վերաբերյալ օրենսդրական դրույթները նախատեսված են կամ քրեական օրենսդրությամբ (Բելգիա, Էստոնիա, Չեխիա, Ֆրանսիա, Հունգարիա, Լատվիա, Մոլդովա, Հոլանդիա, Նորվեգիա, Շվեդիա, Շվեյցարիա, Ռումինիա) կամ առանձին իրավական ակտերով (Իռլանդիա, Մեծ Բրիտանիա): Կան երկրներ, որտեղ քրեական արդարադատության համակարգում պրոբացիոն ծառայության դերը նախատեսված է քրեական դատավարության օրենսգրքում: Այս առումով, ի լրումն պրոբացիայի ծառայության լիազորությունների, քրեական, քրեական դատավարության և քրեակատարողական օրենսգրքերով (դրանց խնդիրների լույսի ներքո) պետք է նախատեսվեն համապատասխան փոփոխություններ և լրացումներ: Իսկ պրոբացիայի ծառայության խնդիրները,

---

<sup>71</sup> European Probation Service Systems: A Comparative Overview. Anton van Kalmthout and Ioan Durnescu.

գործունեության սկզբունքները, լիազորությունները, կառուցվածքը, պրոբացիոն ծառայության ծառայողի իրավական և սոցիալական ապահովման պետական երաշխիքները, ինչպես նաև նյութատեխնիկական ապահովման, ֆինանսավորման և գործունեության վերահսկման կարգը համապարփակ պետք է կարգավորվի «Պրոբացիոն ծառայության մասին» օրենքով:

Պրոբացիայի ծառայության վերաբերյալ միջազգային փաստաթղթերի և արտասահմանյան պետությունների օրենսդրության, փորձի ուսումնասիրությունը փաստում է, որ տարբեր իրավական համակարգերում պրոբացիայի ծառայություններն օժտված են տարբեր ծավալի իրավասությամբ և լիազորություններով: Սույն պայմաններում հնարավոր չէ նախապատվություն տալ որևէ կոնկրետ մոդելի, քանի որ դրանք հիմնված են տեղական պատմական, ավանդական, մշակութային, սոցիալական և տնտեսական առանձնահատկությունների վրա: Հետևաբար Հայաստանի Հանրապետության Պրոբացիայի ծառայության հիմնումն ու զարգացումը նույնպես պետք է բխեն, ինչպես պրոբացիայի համակարգի վերաբերյալ միջազգային նորմերից, այնպես էլ Հայաստանի Հանրապետության քրեական արդարադատության և քրեակատարողական համակարգի առանձնահատկություններից և պահանջներից:

Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ չնայած սույն փաստաթղթով ներկայացված Պրոբացիայի ծառայության գործառույթների լայն շրջանակին, ծառայության ստեղծումը և գործառույթների ներդրումը պետք է իրականացվեն փուլային կարգով, որը կապահովագրի ծառայությանը հնարավոր խնդիրներից և դժվարություններից, ինչպես նաև կերաշխավորի ծառայության առջև դրված նպատակների և խնդիրների արդյունավետ իրականացմանը:

Հայաստանի Հանրապետությունում Պրոբացիայի պետական ծառայության կազմակերպման և նրա գործունեության հիմունքների սահմանման կարևորագույն հիմնահարցերից պետք է լինեն՝

- 1) Պրոբացիայի ծառայության առաքելությունը.
- 2) Պրոբացիայի ծառայության նպատակների և խնդիրների հստակեցումը.
- 3) Պրոբացիայի ծառայության գերատեսչական ենթակայությունը.
- 4) Պրոբացիայի ծառայության գործունեության շրջանակը և հստակ գործառույթները:

### ***3.2. Պրոբացիայի ծառայության առաքելությունը***

Հիմք ընդունելով ԵՄ նախարարների խորհրդի Պրոբացիայի եվրոպական կանոնների վերաբերյալ հանձնարարականը («European Probation Rules», 2010 թ.)՝ Պրոբացիայի ծառայության առաքելությունն է նպաստել արդար քրեական դատավարությանը, ինչպես նաև հասարակական անվտանգությանը՝ կանխելով և նվազեցնելով հանցագործությունները:

### ***3.3. Պրոբացիայի ծառայության նպատակները և խնդիրները***

Հայաստանի Հանրապետության պրոբացիայի ծառայության նպատակներն են հանցագործությունների նվազեցումը՝ վերահսկելով, ուղղորդելով ու աջակցելով հանցանք կատարած անձանց և նպաստելով նրանց արդյունավետ վերասոցիալականացմանը, հասարակության անվտանգությանը և արդարադատության իրականացմանը նպաստելը:

Պրոբացիոն ծառայության *հիմնական խնդիրներն են.*

- նպաստել հանցագործությունների կատարման ու կրկնահանցագործությունների նվազմանը.
- նպաստել քրեակատարողական հիմնարկների բեռնաթափմանը.
- նպաստել առավել տեղեկացված և անաչառ որոշումների կայացմանը՝ խափանման միջոցի ընտրության և պատժի նշանակման, գործընթացներում.
- նպաստել առավել տեղեկացված և անաչառ որոշումների կայացմանը՝ դատապարտյալին պատժից պայմանական վաղաժամկետ ազատման կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինման ներկայացման գործընթացներում.
- նպաստել հանցանք կատարած անձի ուղղմանը հասարակությունում.
- հանցանք կատարած անձի վերասոցիալականացումը.
- սոցիալական արդարության վերականգնումը.
- հասարակության անվտանգության ապահովումը՝ հանցանք կատարած անձի կողմից նոր հանցագործությունների կատարման հավանականությունը նվազեցնելու միջոցով:

### ***3.4. Պրոբացիայի ծառայության փոխհարաբերությունը քրեակատարողական ծառայության հետ***

Անդրադառնալով այն հարցին, թե արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունում Պրոբացիայի պետական ծառայությունը պետք է գործի քրեակատարողական ծառայության ներսում, թե՞ պետք է կազմակերպական և գործառնությանին առումով հանդես գա որպես վերջինից լիովին անկախ և առանձին սուբյեկտ, և ինչ հարաբերակցություն պետք է ունենան այս երկու կառույցները, հարկ է քննարկել որոշ հարցեր:

Պրոբացիայի ծառայության կողմից այլընտրանքային պատժատեսակների կատարման հնարավորության հարցը լուծելու համար անհրաժեշտ է պարզել, թե Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի պետական ծառայությունը, իր բնույթով չհանդիսանալով անմիջական հարկադրանք կիրառող մարմին, կարո՞ղ է արդյոք ապահովել ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված ազատազրկման հետ չկապված պատիժների կիրառումը, դրանք են՝

1) տուգանքը, 2) որոշակի պաշտոն զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, 3) հանրային աշխատանքները, 4) հատուկ կամ զինվո-

րական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը, 5) գույքի բռնագրավումը:

Նշված պատժատեսակներից առաջին երեքի կատարումը (տուգանք, որոշակի պաշտոն զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, հանրային աշխատանքները) ՀՀ քրեակատարողական ծառայության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի պարտականություններն են, իսկ հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելը և գույքի բռնագրավումը (որի կատարումը, ըստ էության, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության պարտականությունն է) իրականացնում է հիմնական պատիժը կատարող մարմինը, իսկ քանի որ դրանք կարող են նշանակվել միայն ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար, ապա դրանք գերազանցապես կատարվում են քրեակատարողական հիմնարկի կողմից:

Այլընտրանքային պատիժների կատարման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված կարգի ուսումնասիրությունից բխում է, որ դրանք կարող են կատարվել նաև այլ մարմնի կողմից, քան քրեակատարողական ծառայությունն է: Դրանցից միայն հանրային աշխատանքներն են, որոնց կատարումը ենթադրում է դատապարտյալի նկատմամբ վերահսկողական միջոցառումների իրականացում և կրում է պարբերական բնույթ: Սակայն միջազգային փորձի ուսումնասիրությունից բխում է, որ պրոբացիայի ծառայություն ունեցող բոլոր պետությունները հանրային աշխատանքների կատարումը վերապահել են ոչ թե քրեակատարողական ծառայությանը, այլ պրոբացիայի ծառայությանը:

Ելնելով վերոգրյալից, կարծում ենք, այլընտրանքային բոլոր պատիժների կատարումը պետք է վերապահել պրոբացիայի ծառայությանը, բացառությամբ գույքի բռնագրավումից և հատուկ կամ զինվորական կոչումից, կարգից, աստիճանից կամ որակավորման դասից զրկելուց, եթե դրանց հետ որպես հիմնական պատիժ է նշանակվել ազատազրկումը: Այդ դեպքում այդ երկու պատիժների կատարումը պետք է ապահովի համապատասխան քրեակատարողական հիմնարկը:

Այսինքն՝ տուգանքի, որոշակի պաշտոն զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելու, հանրային աշխատանքների կատարումը պետք է ապահովի Պրոբացիայի պետական ծառայությունը:

Պրոբացիայի պետական ծառայությունն այն ինստիտուտն է, որը կերաշխավորի այլընտանքային պատժատեսակների արդյունավետ և նպատակային կիրարկումը: Ընդ որում, անհրաժեշտ է ընդգծել, որ նպատակային խնդիր է, որպեսզի այլընտրանքային պատժատեսակներ և այլընտրանքային խափանման միջոցներ իրականացնող մարմինը չհանդիսանա ուժային կառույց և ենթակայական կապ չունենա ազատազրկման ձևով պատիժների իրականացնող մարմնի հետ:

Քրեակատարողական ծառայությունում գործող ՍՀԻ աշխատանքների ստորաբաժանումները կատարում են ազատագրված պատժատեսակի հիմնական նպատակներից մեկը՝ դատապարտված անձի ուղղմանը նպաստելը՝ ապահովելով պատժի անհատականացման սկզբունքի կիրարկումը:

Այս բաժինները պետք է սերտորեն համագործակցեն պրոբացիայի ծառայության հետ (գործողությունների մակարդակով համագործակցության վերաբերյալ կխոսվի հաջորդիվ վերնագրերում):

Պրոբացիայի ծառայության գործունեության հետ համատեղ պետք է մշակվի նաև ՍՀԻԱ բաժինների զարգացման նոր ռազմավարություն՝ ներառելով նվազագույնը. մասնագետների տարանջատված ու հստակ գործառնության պարտականություններ, մասնագետների վերապատրաստումներ, դատապարտյալների անձնային և վարքային դրսևորումների գնահատման հստակ չափորոշիչներ, գնահատման մեխանիզմի ներդրում, կրթական ու աշխատանքային ռեսուրսների հզորացում, պետական ու ոչ պետական կազմակերպությունների հետ համագործակցության ամրագրում ու իրագործում, այս ամենի (և ոչ միայն) ամրագրում՝ ոլորտը կանոնակարգող իրավական ակտում և դրանից բխող մեթոդական ձեռնարկներում:

### ***3.5. Պրոբացիայի ծառայության համագործակցությունը***

Ելնելով պրոբացիայի ծառայության առջև դրված խնդիրների արդյունավետ և ամբողջական իրականացման հնարավորինս բարձր որակի հատուկ մասնագիտական ծառայություններ մատուցելու նկատառումներից, ինչպես նաև ֆինանսական միջոցների սղությունից՝ պրոբացիայի ծառայության գործունեության անհրաժեշտ է ներգրավել նաև հասարակական և մասնավոր կազմակերպություններին, պետական, տեղական ինքնակառավարման մարմիններին և կամավորներին՝ նրանց պատվիրակելով պրոբացիայի ծառայության որոշակի գործառնություններ: Նման կարգավորման հնարավորություն է նախատեսվում «Ազատագրված հետ չկապված միջոցների վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններ»-ով, անդամ պետություններին ուղղված՝ Նախարարների կոմիտեի CM/Rec(2010)1 առաջարկությամբ: Գործնականում նման կարգավորում է նախատեսված նաև նախկին խորհրդային հանրապետություններում (օրինակ՝ Լատվիայում, Էստոնիայում):

Պրոբացիոն ծառայության որոշ գործառնությունների կատարումը կարող է փոխանցվել այլ կազմակերպությունների՝ Պրոբացիայի ծառայության կողմից կնքված համապատասխան պայմանագրի հիման վրա ընդունված ՀՀ արդարադատության նախարարի որոշմամբ: Այդ կազմակերպություններն իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում են նույն օրենսդրությամբ, ինչ պրոբացիոն ծառայության աշխատակիցները: Դրանց համապատասխան՝ ներկայացուցիչները և կամավորները կրում են նույն պար-

տականությունները և օգտվում են նույն իրավունքներից, ինչ պրոբացիոն ծառայության աշխատակիցները:

Մասնավոր ոլորտի ներկայացուցիչների կամ կամավորների ներգրավումը, Պրոբացիայի ծառայության լիազորությունների իրականացումը պետք է կայանա պետական հովանությամբ: Պետությունն է կրում պատասխանատվություն՝ պրոբացիոն ծառայության գործունեության որակի համար:

Մերտ համագործակցելով արդեն իսկ գործող հասարակական և մասնավոր կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների, կրթական հաստատությունների, զբաղվածության գործակալությունների, սոցիալական ծառայությունների հետ, Պրոբացիայի ծառայությունը կարող է պատվիրակել վերջիններս՝ իրականացնելու սոցիալական, կրթական, մշակութային, հոգեբանական ծրագրեր, որոնք ուղղված կլինեն հանցանք կատարած անձանց վերասոցիալականացմանը:

Այլ կազմակերպությունների և կամավորների ակտիվ ներգրավումը, Պրոբացիայի ծառայության գործունեության լայն կիրառումը Հայաստանի Հանրապետությունում կարող է որոշակի չափով լուծել Պրոբացիայի ծառայության ստեղծման առաջին փուլում նրա առջև ծառացած մի շարք խնդիրներ, որոնցից են տվյալ ոլորտում բավարար ֆինանսական միջոցների և կադրերի անբավարարության հարցը և կնպաստի ռեսուրսների ճիշտ տեղաբաշխմանն ու օգտագործմանը:

Հասարակական կազմակերպությունները, ի թիվս այլ գործառույթների, կարող են օգտակար լինել նվազագույնը հետևյալ ոլորտներում.

- մատուցել սոցիալական ծառայություններ (օրինակ՝ ժամանակավոր կացարանի տրամադրում, խորհրդատվություն, ուղղորդում աշխատանքի հարցերում և այլն),
- իրականացնել հանցավոր վարքի ուղղմանը միտված ծրագրեր,
- զբաղվել համայնքային աշխատանքների համար հարմար աշխատատեղերի փնտրտուքով,
- կատարել հետազոտություններ,
- կազմակերպել կամավորների կամ մենտորների աշխատանքը և այլն:

Պրոբացիոն ծառայության առջև դրված է, խնդիրներն իրականացնելու նպատակով, այլ պետական մարմինների հետ նշված կառույցի համագործակցությունը և պետք է ենթադրի նվազագույնը համագործակցություն հետևյալ մարմինների հետ և պետք է հստակ ամրագրվի օրենսդրությամբ.

- ՀՀ կրթության և գիտության նախարարություն,
- ՀՀ առողջապահության նախարարություն,
- ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն,
- ՀՀ մշակույթի նախարարություն,
- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,
- տեղական ինքնակառավարման մարմիններ,

- սոցիալական ծառայություններ,
- վերականգնողական կենտրոններ,
- խնամատար հաստատություններ,
- զբաղվածության գործակալություններ,
- կրթական հաստատություններ:

### ***3.6. Պրոբացիայի ծառայության գործունեության հիմնական շրջանակը***

Պրոբացիայի գործունեության հիմնական շրջանակը պետք է ներառի նվազագույնը հետևյալ գործողությունները.

- վարույթն իրականացնող և հանցանք կատարած անձի առնչությամբ որոշում կայացնելու իրավասություն ունեցող այլ մարմիններին տարբեր փուլերում համապարփակ տեղեկատվության տրամադրում (զեկույցների տեսքով), այդ թվում՝ բնութագրական կամ փորձագիտական զեկույցների ներկայացում.
- ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների և խափանման միջոցների կատարում և կիրառման ապահովում.
- պրոբացիոն պատիժների/պայմանների կատարման նկատմամբ վերահսկողություն.
- պատիժը պայմանականորեն չկիրառելու, պատժի կատարման հետաձգման, դատավճռի կատարման հետաձգման, պայմանական ազատման ժամանակ վերահսկողություն, ինչպես նաև այլ հիմքերով պատժից ազատված անձի նկատմամբ վերահսկողություն (եթե օրենքով նախատեսված է պատժի կրման հնարավորությունը).
- հանցանք կատարած անձանց ուղղորդում, վերահսկողություն և աջակցություն քրեական վարույթի ողջ ընթացքում.
- մեղադրյալի և տուժողի հաշտեցում (մեղիացիա).
- սոցիալական, կրթական, մշակութային, հոգեբանական ծրագրերի իրականացում՝ հանցանք կատարած անձի վերասոցիալականցումն ու սոցիալական ինտեգրումն ապահովելու նպատակով վարույթի ողջ ընթացքում, ինչպես նաև ազատությունից զրկելու հետ չկապված պատիժը կրելու ընթացքում.
- ազատազրկման դատապարտված անձանց պատժից պայմանական վաղաժամկետ ազատման կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու զեկույցի ներկայացում.
- ազատազրկման դատապարտված անձանց ուղղման անհատական ծրագրի մշակման համար քրեակատարողական ծառայությանը մասնագիտական խորհրդատվության/աջակցության տրամադրում.
- ազատազրկման դատապարտված անձանց ներման հարցերով խորհրդատվական զեկույցների ներկայացում.
- էլեկտրոնային մոնիտորինգ (հնարավորության դեպքում).



- պատժից ժամանակավոր կամ պայմանական ազատված անձանց օժանդակության տրամադրում:

#### **4. ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Հայաստանի Հանրապետությունում Պրոբացիայի ծառայության լիազորություններ և գործառույթների շրջանակը պետք է ընդգրկի.

- մինչդատական փուլում մինչդատական զեկույցի պատրաստում և կալանավորմանը այլընտրանք խափանման միջոցներից տնային կալանքի<sup>72</sup> և հսկողության իրականացում.
- դատական փուլում՝ մինչև պատժի նշանակելը զեկույցի տրամադրում և մեղիացիա.
- պենիտենցիար փուլում՝ այլընտրանքային պատիժների կատարում, պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում փորձաշրջանի կազմակերպում և իրականացում, վերականգնողական աշխատանքներ, պատժից ազատված անձի վարքի վերահսկողություն, պատիժը հետաձգված անձանց նկատմամբ վերահսկողություն, ազատագրված անձանց պատժի կրման ընթացքում պատժի անհատական պլանավորմանը աջակցություն.
- հետպենիտենցիար փուլում՝ դատվածությունը հանելու առնչությամբ որոշում կայացնելու իրավասություն ունեցող մարմնին զեկույցի ներկայացում:

#### **4.1. Մինչդատական փուլում պրոբացիայի բնութագիրը**

##### **4.1.1. Մինչդատական զեկույց**

Պրոբացիոն ծառայությունների դերակատարության մեջ կենտրոնական դեր են զբաղեցնում դատարանի կամ մինչդատական վարույթն իրականացնող մարմնի համար պրոբացիոն աշխատակիցների կողմից պատրաստված զեկույցները, որոնք այդ մարմինների կողմից հաշվի են առնվում որոշումներ կայացնելիս: Այս զեկույցները խորհրդատվական բնույթի են և դրանք հաշվի առնելը վերը նշված մարմինների համար պարտադիր պայման չէ, վերջիններս ազատ են որոշումներ կայացնելիս: Զեկույցը յուրաքանչյուր դեպքում պետք է լինի օբյեկտիվ և անկողմնակա:

Մինչդատական փուլում դատախազը կամ դատավորը կարող են գրավոր դիմել Պրոբացիայի ծառայությանը՝ կասկածյալի կամ մեղադրյալի վերաբերյալ մինչդատական զեկույց տրամադրելու համար: Դատախազի կամ դատավորի գրավոր դիմումը պետք է ներկայացվի Պրոբացիայի ծառայության պետին, որն էլ, ըստ սահմանված

<sup>72</sup> [http://www.cepprobation.org/uploaded\\_files/1\\_Chapter\\_1\\_Comparative\\_overview.pdf](http://www.cepprobation.org/uploaded_files/1_Chapter_1_Comparative_overview.pdf).

կարգի, պետք է հանձնարարի համապատասխան ստորաբաժանմանը (կամ աշխատակցին) պատրաստելու մինչդատական զեկույցը: Ջեկույցը պետք է կցվի քրեական գործին<sup>73</sup>:

Մինչդատական զեկույցը պետք է տրամադրվի այն քրեական գործերով, որոնց դեպքում վարույթն իրականացնող մարմինը պատրաստվում է դիմել դատարան՝ կալանքը որպես խափանման միջոց նշանակելու միջնորդությամբ: Այն պետք է պարտադիր լինի անչափահասների ցանկացած գործով (այս մասին առավել մանրամասն կխոսվի համապատասխան բաժնում):

Ինչպես վկայում են եվրոպական փորձի ուսումնասիրությունները<sup>74</sup>, մինչդատական զեկույցներն իրենց նմանություններով ու տարբերություններով ընդհանուր առմամբ բաժանվում են երկու մեծ խմբի՝ բնութագրական և գնահատողական (կամ փորձագիտական<sup>75</sup>):

Որպես կանոն՝ բնութագրական զեկույցները հիմնվում են մեղադրյալի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների վրա և սահմանափակվում են դատարանին կամ դատախազին տվյալ անձի կոնկրետ առանձնահատկությունները բնութագրելով՝ զերծ մնալով անձի կողմից հետագայում հանցավոր վարքագիծ դրսևորելու հավանականությունը կամ հնարավորությունը գնահատելուց: Այս առումով գնահատողական զեկույցներն ունեն առավել կանխատեսող բնույթ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչդատական զեկույցները հիմնականում դերակատարում են ունենում մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցի ընտրության հարցում (հատկապես կալանավորմանն այլընտրանք ընտրելու գործընթացում), ուստի կարևոր հարցերից մեկը, որ հուզում է դատարանին և/կամ դատախազին, կալանավորմանն այլընտրանք խափանման միջոց ընտրելու դեպքում տվյալ մեղադրյալի կողմից հանցավոր վարք դրսևորելու ռիսկի գնահատումն է: Այս պարագայում հաճախ կիրառվում են վերը նշված գնահատողական կամ փորձագիտական զեկույցները:

Մեր կարծիքով, Հայաստանի Հանրապետության Պրոբացիայի ծառայությունը պետք է օժտված լինի նշված զեկույցները ներկայացնելու լիազորությամբ՝ ըստ փուլերի:

Ընդհանուր առմամբ, զեկույցները պետք է ներառեն անձի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն առնվազն՝ սոցիալական, ընտանեկան դրության, որոշակի հա-

---

<sup>73</sup> Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, ընդհանուր մոտեցումներով հանդերձ, յուրաքանչյուր երկիր ունի իր մոտեցումները և հատկանիշները: Այդ իսկ պատճառով տվյալ գործառնությունի նկարագրությունը հիմնված է ոչ թե մեկ, այլ մի քանի եվրոպական երկրների (Հունգարիա, Էստոնիա, Լատվիա, Դանիա) փորձից վերցված առանձին տարրերի վրա:

<sup>74</sup> European Probation Service Systems: A Comparative Overview. Anton van Kalmthout and Ioan Durnescu.

<sup>75</sup> Նման փորձ դիտարկվում է Հունգարիայում, երբ մեղադրյալի վերաբերյալ դատարանը պահանջում է փորձագիտական զեկույց՝ անձի կողմից հանցագործություն կատարելու հնարավորությունը գնահատելու վերաբերյալ:

կումների, առողջական վիճակի, հնարավոր կախվածությունների, կրթության, աշխատանքային պատմության, գույքային դրության և այլնի վերաբերյալ: Այն պատրաստելիս պրոբացիոն ծառայողը պետք է առաջնորդվի սահմանված չափորոշիչներով<sup>76</sup>:

Անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար պրոբացիոն ծառայողը կարող է հանդիպել և զրուցել ինչպես կասկածյալի/մեղադրյալի, այնպես էլ նրա հարազատների, բարեկամների և ընկերների, ինչպես նաև կասկածյալի/մեղադրյալի հետ կապ ունեցող այլ անձանց հետ: Կասկածյալի/մեղադրյալի հետ զրույցին, վերջինիս ցանկությամբ, կարող է ներկա լինել նաև կասկածյալ/մեղադրյալը կամ նրա պաշտպանը:

Անձի վերաբերյալ օբյեկտիվ պատկերացում կազմելու համար, պրոբացիոն ծառայողը կարող է դիմել այն հաստատություններին, որտեղ սովորել և աշխատել է անձը, տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև այլ մարմիններին, որոնք կարող են բնութագրական տեղեկություններ տրամադրել նրա վերաբերյալ:

Զեկույցի արժանահավատությունը երաշխավորելու նպատակով՝ պրոբացիոն ծառայողը պետք է հիմնավորի զեկույցում ներկայացված տեղեկատվությունը և փաստերը:

Ինչպես արդեն նշվեց, մինչդատական զեկույցը ներկայացվում է դիմող մարմնին, և ներառվում է քրեական գործի նյութերում: Դատախազի կողմից մինչդատական զեկույցը պետք է օգտագործվի հանցագործի անձի վերաբերյալ օբյեկտիվ պատկերացում կազմելու, համապատասխան խափանման միջոց ընտրելու և մեղադրական եզրակացությունը կազմելու համար:

Դատարանը կարող է դիմել Պրոբացիայի ծառայությանը՝ ներկայացնելու նոր մինչդատական զեկույց կամ արդեն իսկ առկա զեկույցը լրացվելու քրեական գործի նյութերում:

Դատարանի կողմից մինչդատական զեկույցն օգտագործվում է խափանման միջոց նշանակելիս՝ անձի վերաբերյալ համակողմանի և օբյեկտիվ պատկերացում ունենալու (բնութագրական զեկույց), ինչպես նաև անձի վտանգավորության աստիճանի և հանցագործություն կատարելու ռիսկի վերաբերյալ գնահատական ունենալու համար (փորձագիտական զեկույց):

Հաշվի առնելով զեկույցում ներկայացված անձի բնութագիրը կամ վտանգավորության աստիճանի գնահատումները՝ դատարանը կարող է նաև սահմանել Պրոբացիայի ծառայության կողմից իրականացվող լրացուցիչ միջոցներ, որոնք կնպաստեն անձի վերասոցիալականացման և վերաինտեգրման երաշխիքներ ստեղծելուն:

---

<sup>76</sup> Պրոբացիայի ծառայության ներդրման հետագա փուլերում անհրաժեշտ է օրենսդրորեն սահմանել այն բոլոր չափորոշիչները, որոնց շրջանակում պիտի իրականացվեն ինչպես անձի բնութագրումը, այնպես էլ հետագայում հանցավոր վարք դրսևորելու գնահատման կանխատեսումները:

#### **4.1.2. Այլընտրանքային խափանման միջոցների կիրառում**

Ներկայիս ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կալանավորմանն այլընտրանքային խափանման միջոցը միայն գրավն է: ՀՀ ապագա քրեական դատավարության օրենսգրքի հայեցակարգով ամրագրված է կալանավորման՝ որպես խափանման միջոցի կիրառման սահմանափակման անհրաժեշտությունը: Նախագծի հիմնական բնութագրական գծերից մեկը խափանման միջոցների շրջանակի ընդլայնումն է: Կալանավորման և այլընտրանքային խափանման միջոցների հստակ նշումը, նոր այլընտրանքային խափանման միջոցների (ոստիկանությունում հաշվառվելը, տնային կալանքը և այլն) սահմանումը, ինչպես նաև գրավը՝ որպես ինքնուրույն խափանման միջոց նախատեսելը, պետք է նպաստեն իրավակիրառ պրակտիկայում անհիմն կամ հարկադրված կալանավորումների թվի կրճատմանը:<sup>77</sup>

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծը որպես կալանքին այլընտրանքային խափանման միջոցներ նախատեսում է տնային կալանքը, ոստիկանության հսկողությանը հանձնելը և գրավը: Սակայն նախագծով սահմանվող այլընտրանքային խափանման միջոցներից տնային կալանքի և ոստիկանության հսկողության հանձնելը նախատեսվում է իրականացնել ոստիկանության կողմից: Այս մոտեցումը վերանայման կարիք ունի՝ ՀՀ-ում Պրոբացիոն ծառայության ստեղծման և երկրում իրականացվող քրեադատավարական բարեփոխումների, ինչպես նոր՝ վերականգնողական արդարադատության համատեքստում:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի շարք երկրներում հենց Պրոբացիայի ծառայությունն է իրականացնում այնպիսի այլընտրանքային խափանման միջոցներ, ինչպիսիք են տնային կալանքը և հսկողության հանձնելը (այդ երկրներից են, օրինակ՝ Իտալիան, Ֆրանսիան, Լեհաստանը)<sup>78</sup>:

Նոր քրեական դատավարության օրենսգրքով սահմանվող կալանավորում խափանման միջոցին այլընտրանքային խափանման միջոց կիրառելու դեպքում, հասարակությունում տվյալ կասկածյալի վարքի նկատմամբ Պրոբացիայի ծառայության կողմից իրականացվող վերահսկողությունը կլուծի մի շարք խնդիրներ: Մասնավորապես նվազագույնի կհասցվի անձի շփումը իրավապահ մարմինների հետ՝ դրանով իսկ կրելով ավելի սոցիալական ուղղվածություն, վերահսկողության ընթացքում հանցագործության մեջ մեղադրվող անձը կստանա հոգեբանական օժանդակություն և աջակցություն: Մյուս կողմից՝ կլուծվի նաև կալանավորված անձանց պահելու վայրերի գերբնակեցման խնդիրը, ինչպես նաև կնվազի հանցագործությունների կատարման մեջ մեղադրվող տարբեր անձանց շփումը և հանցավոր փորձառության փոխանցումը:

<sup>77</sup> ՀՀ քրեական դատավարության նախագծի հոդված 117:

<sup>78</sup> European Probation Service systems: A Comparative Overview. Anton M. van Kalmthout and Ioan Durnescu, p.22.

Տնային կալանքը խափանման այնպիսի միջոց է, որի դեպքում անձը պարտավոր է չլքել դատարանի որոշման մեջ նշված բնակության վայրը: Դատարանի որոշմամբ կարող են սահմանվել նաև լրացուցիչ այլ սահմանափակումներ: Տնային կալանք կիրառելու մասին դատարանի որոշման մեջ նշվում են այն կոնկրետ սահմանափակումները, որոնք տարածվում են մեղադրյալի նկատմամբ:

Հսկողությանը հանձնելը մեղադրյալի տեղաշարժման և գործողությունների ազատության սահմանափակումն է, որի պայմաններում նա պարտավոր է ոչ հաճախ, քան շաբաթը երեք անգամ գրանցվել դատարանի որոշման մեջ նշված Պրոբացիայի ծառայությունում: Դատարանի որոշմամբ մեղադրյալին կարող է արգելվել նաև առանց քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվության փոխելու մշտական կամ ժամանակավոր բնակության վայրը, այցելելու որոշման մեջ նշված որոշակի վայրեր, տեսակցելու որոշակի անձանց, օրվա որոշակի ժամերին լքելու իր բնակության վայրը:

Այս արգելքները սահմանելիս հաշվի են առնվում մեղադրյալի աշխատանքի կամ ուսման պայմանները կամ առողջական վիճակը:

Մեղադրյալին հսկողությանը հանձնելու մասին որոշման պատճենը կատարման նպատակով պետք է ուղարկվի Պրոբացիայի ծառայություն: Այն անհապաղ պետք է գրանցի մեղադրյալին և նրան հսկողության ընդունելու մասին տեղյակ պահի քրեական վարույթն իրականացնող մարմնին:

Մեղադրյալի վարքագծի նկատմամբ հսկողությունը դատարանի որոշմամբ կարող է իրականացվել նաև հատուկ էլեկտրոնային միջոցներով: Մեղադրյալը պարտավոր է իր վրա մշտապես կրել նշված էլեկտրոնային հսկողության միջոցները, դրանք պահել սարքին վիճակում, ինչպես նաև արձագանքել Պրոբացիայի ծառայության հսկողության ազդանշաններին: Մեղադրյալի կողմից տնային կալանքի պայմանները խախտելու դեպքում Պրոբացիոն ծառայության միջնորդության հիման վրա դատարանն այն կարող է փոխարինել կալանքով:

## ***4.2. Դատական փուլում պրոբացիայի բնութագիրը***

### ***4.2.1. Պատժի նշանակումից առաջ զեկույցի տրամադրում***

ՀՀ ապագա քրեական դատավարության օրենսգրքի հայեցակարգը նախատեսում է դատավճռի կայացման երկփուլ համակարգ: Հայեցակարգի 8.31 կետի համաձայն առաջին փուլում կողմերի և դատարանի համար քննարկման առարկա է դառնում ամբաստանյալի մեղավորության կամ անմեղության հարցը, որի լուծումից կախված՝ երկրորդ փուլում որոշվում են դատավճռի կոնկրետ տեսակից բխող մյուս հարցերը:

Այս երկրորդ փուլում դատարանը հրավիրված լրացուցիչ դատական նիստում քննարկման առարկա դարձած ամբաստանյալի նկատմամբ պատիժ նշանակելու կամ չնշանակելու, նրա պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող

հանգամանքներն ուսումնասիրելու, կոնկրետ պատժատեսակը կամ պատժաչափը ընտրելու հետ կապված հարցերը լուծելու համար, հստակ կողմնորոշիչներ ունենանալու նպատակով կարող է հանձնարարել Պրոբացիայի պետական ծառայությանը կազմել հատուկ զեկույց, որը կրում է խորհրդատվական բնույթ:

Այս զեկույցը բավական նման է մինչդատական փուլում տրամադրվող զեկույցներին: Սակայն տարբերակիչ հատկանիշներից է այն, որ այս զեկույցի պատրաստման ժամանակ պրոբացիոն ծառայողն ավելի երկար ժամանակ կունենա անձի հետ շփվելու, ինչպես նաև արդեն իսկ առկա կլինի որոշակի նախապատմություն, ինչը թույլ կտա ավելի խորքային վերլուծություն կատարելու: Բացի այդ, զեկույցը պարունակում է նաև եզրակացություն՝ անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառելու, օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու, պատժի կրումը հետաձգելու կամ պատժից ազատելու հնարավորության վերաբերյալ և այդ դեպքում նրա կատարելիք պարտավորությունների մասին: Այդպիսի կարգ նախատեսված է նաև Շվեդիայիում, Լատվիայում, Մոլդովայում և այլն<sup>79</sup>:

Զեկույցը պետք է ներառի անձի վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն՝ նվազագույնը պարունակելով տեղեկություններ հետևյալի մասին՝ սոցիալական, ընտանեկան դրությունը, նախկին հնարավոր դատվածությունները կամ առնչությունը իրավապահ մարմինների հետ, որոշակի հակումները, առողջական վիճակը, հնարավոր կախվածությունները, կրթությունը, աշխատանքային պատմությունը, գույքային դրությունը և այլն:

Այն պատրաստելիս պրոբացիոն ծառայողը պետք է առաջնորդվի սահմանված չափանիշներով: Անհրաժեշտ տեղեկատվությունը ստանալու համար նա պարբերաբար կարող է հանդիպել և զրուցել նախ ամբաստանյալի, հետո նաև նրա հարազատների, բարեկամների և ընկերների ու նրա հետ կապ ունեցող այլ անձանց հետ: Ամբաստանյալի հետ զրույցներին, վերջինիս ցանկությամբ, կարող է ներկա լինել նաև նրա պաշտպանը:

Զեկույցը պատրաստելիս պրոբացիոն ծառայողը կարող է դիմել նաև համապատասխան դատախազին և դատավորին՝ գործի նյութերն իրեն տրամադրելու համար: Անձի անձնական կյանքին վերաբերող տվյալները հավաքագրելիս և մշակելիս պրոբացիոն ծառայողը պետք է առաջնորդվի անձնական կյանքի անձեռնմխելիության և անձնական կյանքի գաղտնիության ապահովման սկզբունքներով:

Հավաքագրված տեղեկատվության, ինչպես նաև ամբաստանյալի հետ անձամբ ունեցած զրույցների արդյունքում պրոբացիոն ծառայողը պետք է տա անձի օբյեկտիվ սոցիալ-հոգեբանական նկարագիրը: Զեկույցի արժանահավատությունը երաշխավորե-

<sup>79</sup> [http://www.cep-probation.org/default.asp?page\\_id=157&map\\_id=59](http://www.cep-probation.org/default.asp?page_id=157&map_id=59).

լու նպատակով պրոբացիոն ծառայողը պետք է հիմնավորի զեկույցում ներկայացված տեղեկատվությունը և փաստերը:

Դատարանին նման եզրակացության ներկայացումը կնպաստի առավել իրազեկ ու անաչառ որոշման կայացմանը՝ հաշվի առնելով պատժի համաչափությունը՝ անձի և նրա կողմից կատարված արարքի առնչությամբ: Նման պրակտիկան կնպաստի նաև պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի և այլընտրանքային պատիժների կիրառման ընդլայնմանը:

#### ***4.2.2. Մեղիացիա***

ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի հայեցակարգը նախատեսում է մասնավոր մեղադրանքի վարույթը: Այս վարույթի գործերով տուժողի բողոքն անմիջականորեն հասցեագրվում է դատարանին, որն էլ կողմերի ներկայացված և հետազայում դատարանի կողմից ձեռք բերված նյութերի հիման վրա ամբողջ ծավալով քննում և լուծում է գործը: Մասնավոր մեղադրանքի ինստիտուտը նախատեսվում է միայն ոչ մեծ ծանրության հանցագործությունների համար և նպատակ է հետապնդում գործի քննության ծանրությունը տեղափոխել դատարան:<sup>80</sup>

Ի տարբերություն գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի, ըստ որի մասնավոր մեղադրանքի գործերով քննությունը կարող էր ավարտվել մինչդատական փուլում՝ տուժողի և մեղադրյալի հաշտությամբ դեպքում (ՀՀ քր.դատ. օր. հոդված 36), ներկայիս նախագծով մասնավոր մեղադրանքի վարույթն անմիջապես տեղափոխվում է դատական փուլ:

Մասնավոր մեղադրանքի գործերով մեղիացիայի ինստիտուտը (հաշտեցում) հանդիսանում է գործի դատական լուծման այլընտրանք և համարվում է արտադատական միջամտության տեսակ: Այդ իսկ պատճառով մեղիացիան, որը մի շարք երկրներում նախատեսված է որպես մինչդատական փուլում իրականացվող գործառնություն, մեր երկրում կարող է դիտվել որպես դատական փուլում իրականացվող գործառնություն, ինչպես, օրինակ՝ Մալթայում, Նորվեգիայում, Հյուսիսսահին Իռլանդիայում է:

Մեղիացիայի ընդգծված առավելություններից է այն, որ այս ինստիտուտը հնարավորություն է տալիս արագ փոխհատուցել տուժողի վնասները, հանդիսանում է ավելի սոցիալական, քան դատական միջամտություն և այդ գործընթացում նախատեսում է հանցագործի և տուժողի առավել ակտիվ ներգրավում:<sup>81</sup>

Այս վարույթի շրջանակներում, դատարանի որոշմամբ և կողմերի համաձայնությամբ, գործի քննությունը կարող է փոխանցվել Պրոբացիայի ծառայությանը: Դա-

<sup>80</sup> ՀՀ կառավարության 2011 թ. մարտի 10-ի թիվ 9-6 արձանագրային որոշմամբ հաստատված ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգի 5.7 կետ:

<sup>81</sup> European Probation Service systems: A Comparative Overview. Anton M. van Kalmthout and Ioan Durnescu, p.30.

տարանը կկասեցնի գործի դատական քննությունը և մեղիացիա անցկացնելու վերաբերյալ որոշումը կուղարկի Պրոբացիայի ծառայության պետին, ով էլ, ըստ սահմանված կարգի, պետք է հանձնարարի Պրոբացիայի ծառայության համապատասխան ստորաբաժանմանը՝ (կամ աշխատակցին) սահմանված ժամկետում իրականացնել տվյալ գործի մեղիացիան:

Մեղիացիայի գործընթացը սկսվում է մեղադրյալի կողմից իր մեղքի խոստովանությամբ և իր կողմից պատճառված վնասներն ամբողջությամբ հատուցելու պատրաստակամության և հնարավորության արտահայտմամբ: Մեղիացիայի գործընթացը մինչև վերջ շարունակելու համար այդ ողջ ընթացքում պետք է առկա լինի և՛ մեղավոր, և՛ տուժող կողմերի՝ գործը արտադատական կարգով լուծելու կամավորությունը և ցանկությունը:

Այս գործընթացն ավարտվում է կողմերի միջև կնքված համաձայնությամբ: Կնքված համաձայնությունը ներկայացվում է դատարան, որն էլ, ստուգելով համաձայնության կամավորությունը և իրավաչափությունը, դրա հիման վրա կարճում է քրեական գործը:

Մեղիացիայի նպատակը կողմերի միջև հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման ձևի և չափի վերաբերյալ համաձայնություն ձեռք բերելն է:

Պրոբացիայի ծառայողն այս գործընթացում պետք է հանդես գա որպես համակարգող: Գործընթացի ամբողջ ընթացքում նա պետք է պահպանի անկողմնակալություն: Պրոբացիոն ծառայողն ակտիվորեն մասնակցում է մեղիացիայի գործընթացին, կազմակերպում և անցկացնում է կողմերի միջև բանակցություններ և հետևում կողմերի պարտավորությունների կատարմանը: Նա նաև կողմերին պետք է օգնի գտնել փոխշահավետ և օպտիմալ լուծումներ: Պրոբացիոն ծառայողը պետք է հետևի մեղադրյալի կողմից համաձայնությամբ սահմանված վնասի հատուցման պատշաճ կատարմանը (սահմանված չափով և ձևով): Պրոբացիոն ծառայողի գործառնություններն ավարտվում են համաձայնությամբ սահմանված պարտավորությունների պատշաճ կատարմամբ:

Արդյունքում տուժողը ստանում է իրեն պատճառված վնասի հատուցում, իսկ մեղադրյալը ազատվում է քրեական պատասխանատվությունից՝ ազատվելով նաև դրանով պայմանավորված բոլոր բացասական հետևանքներից:

Ընդ որում, մեղիացիայի ինստիտուտը հետագայում կարելի է նախատեսել ոչ միայն մասնավոր մեղադրանքի գործեր, այլ նաև այլ քրեական գործեր վարելու համար, որը կնպաստի սոցիալական արդարության վերականգնմանը: Մեղիացիայի ինստիտուտը չի կարող կիրառվել հանցագործությունների ռեցիդիվի, կազմակերպված հանցագործությունների, մեղիացիայի ընթացքում կատարված մեկ այլ հանցագործության դեպքերում:



#### **4.3. Պենիտենցիար փուլում պրոբացիայի բնութագիրը**

ՀՀ քրեական օրենսգիրքը նախատեսում է պատժից ազատելու հիմքեր, ինչպիսիք են՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը, ազատազրկում կրող անձի պատժի չկրած մասի փոխարինում ավելի մեղմ պատժատեսակով, ազատազրկման դատապարտված հղի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց պատժի կրման հետաձգում կամ ազատում, պատժից ազատում ծանր հիվանդությունների պատճառով, արտակարգ հանգամանքների հետևանքով, մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու կապակցությամբ: Այս փուլում Պրոբացիայի ծառայությունը պետք է պատժից ազատված անձանց նկատմամբ իրականացնի վերահսկողություն (այդ թվում՝ էլեկտրոնային վերահսկողություն, վերահսկողություն այցելությունների միջոցով):

Նշված վերահսկողությունն իրականացնելիս Պրոբացիայի ծառայությանը տեղեկատվություն է տրամադրվում վերահսկվող անձի իրավունքների ու պարտականությունների մասին, վերահսկվողի ցանկալի վարքագծի վերաբերյալ, վերահսկողության նպատակների, իրականացման մեթոդների և պայմանների մասին, ինչպես նաև նախատեսված պարտականությունների մասին:

Վերահսկողություն իրականացնելիս Պրոբացիայի ծառայությունը, կախված ընտրված միջոցից, կարող է իրականացնել տարբեր գործառնություններ: Օրինակ՝ բնակության վայրը չփոխելու պարտականության դեպքում իրականացնել պարբերական ստուգիչ այցելություններ, որոշակի վայրեր հաճախելու արգելքի դեպքում կապեր հաստատել տեղական մարմինների, այլ կազմակերպությունների և ընտանիքի անդամների հետ, ովքեր տեղեկություն կտրամադրեն անձի կողմից նշանակված պայմաններին հետևելու կամ դրանք խախտելու մասին, պատճառված վնասը հատուցելու և տուժողին նյութական օժանդակություն ցուցաբերելու պարտականության դեպքում պարբերաբար ստուգել անձի եկամուտները և հսկել, որ դատարանի կողմից սահմանված ժամկետում անձը կատարի իր պարտականությունը և այլն:

Վերահսկողության ընթացքում Պրոբացիայի ծառայության կարևոր գործառնություններից պետք է լինի վերասոցիալականացման ծրագրերի իրականացումը, սոցիալական, հոգեբանական և իրավական աջակցությունը պատժից ազատված անձանց նկատմամբ, կրթամշակութային, հոգևոր, մարզական, աշխատանքային և այլ զբաղվածության ապահովման գործունեությունը (անմիջական կատարմամբ կամ պատվիրակմամբ):

Նշված ծրագրերի միջոցով Պրոբացիայի ծառայությունը նպաստում է սոցիալական վերականգնման աշխատանքների իրականացմանը, կարճաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի ստեղծմանը, վերապատրաստման դասընթացների և ուսումնական ծրագրերի կազմակերպմանը, թմրանյութերի և ոգելից խմիչքի օգտագործման դեմ պայքարի հատուկ ծրագրերի իրականացմանը, թմրանյութերից կախվածություն ունեցողների նկատմամբ հսկողության ապահովմանը:

Այս փուլում Պրոբացիայի ծառայությունը պետք է աջակցություն ցուցաբերի քրեակատարողական հիմնարկների սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների ստորաբաժանումներին՝ դատապարտյալների վարքի գնահատման և նրանց ուղղման անհատական ծրագրերի կազմման աշխատանքներում:

Պրոբացիայի ծառայության կարևոր գործառույթը պետք է լինի դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցը քննելու դեպքում այդ անձի վերաբերյալ գեկույցների, սոցիալական-հոգեբանական բնութագրերի ներկայացումը, որը պետք է ներառի նվազագույնը այդ դատապարտյալի բնութագիրը, անհատական, հոգեբանական հատկանիշները, նրա կողմից հանցագործություն կատարելու պատճառները և պայմանները, պատիժ կրելու ընթացքում դրսևորած վարքագիծը, գնահատի կրկնահանցագործության ռիսկը, կատարվող սոցիալական, հոգեբանական, իրավական աշխատանքների արդյունավետությունը, անհրաժեշտ վերահսկողական միջոցները, ոգելից խմիչքից կամ թմրանյութերից կախվածությունը և որոշակի կուրսեր անցնելու հնարավորությունը:

Պրոբացիայի ծառայությունն այս փուլում կարող է նաև ներկայացնել գեկույցներ՝ վերահսկողության պայմանների փոփոխության անհրաժեշտության մասին, ինչպես պայմանների խախտումների դեպքում՝ պատժի կրման հարցերի վերաբերյալ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դատապարտյալի ներման խնդրագրերի քննման և դատապարտյալի ներման հարցը ՀՀ Նախագահի Մահմանադրական լիազորություն է և չկան համապատասխան չափորոշիչներ, ուստի այս փուլում դատապարտյալի՝ պատժից լիովին կամ մասնակի ազատման դեպքում Պրոբացիայի ծառայության լիազորությունները սահմանափակվում է գուտ խորհրդատվական գեկույցների տրամադրմամբ:

#### ***4.4. Հետպենիտենցիար փուլում պրոբացիայի բնութագիրը***

Այս փուլում Պրոբացիայի ծառայության կողմից պետք է իրականացվի պատժից պայմանականորեն ազատված, պատժից պայմանական վաղաժամկետ ազատված, պատիժը կրած անձանց նկատմամբ վերահսկողություն, նրանց օժանդակություն և աջակցություն, վերասոցիալականացումն ապահովելու նպատակով, ինչպես նաև գեկույցի պատրաստում և ներկայացում՝ դատվածությունը հանելու առնչությամբ որոշում կայացնելու իրավասություն ունեցող մարմին:

Պրոբացիայի ծառայությունն այս փուլում պատժից ազատ արձակված անձանց համար պետք է ստեղծի և/կամ պատվիրակի տարբեր կրթական, սոցիալ-հոգեբանական և այլ վերականգնողական ծրագրեր: Անձի՝ պատիժը կրելուց և հանցագործության կատարման կանխումից հետո Պրոբացիայի ծառայությունը պետք է նրա վերասոցիալականացման ապահովման նպատակով հետազատման խնամքի լայն հնարավորություններ ունենա<sup>82</sup>:

<sup>82</sup> United Nations Standard Minimum Rules for Non-custodial Measures (The Tokyo Rules), 9.

## 5. ԱՆՀԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՊՐՈԲԱՑԻՈՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես արդեն նշվել է, ՀՀ պրոբացիոն ծառայությունում պետք է գործի անչափահասների գործերով բաժին, որը զբաղվում է անչափահասների առնչությամբ Պրոբացիոն ծառայության լիազորությունների իրականացմամբ: Պրոբացիոն ծառայության անչափահասների գործերով բաժնում պետք է ներգրավվեն հատուկ մասնագիտացում ունեցող մասնագետներ՝ պրոբացիոն ծրագրերում անչափահաս օրինախախտների սոցիալական, հոգեբանական և մտավոր առանձնահատկությունները հաշվի առնելու նպատակից ելնելով:

Հաշվի առնելով անչափահասների հետ աշխատանքների առանձնահատկությունները՝ Պրոբացիոն ծառայությունը պետք է սերտ համագործակցի խնամակալության և հոգաբարձու մարմինների, սոցիալական և անչափահասների հետ աշխատանքներում ներգրավված այլ պետական և մասնավոր կազմակերպությունների հետ՝ հատկապես տարբեր վերականգնողական, սոցիալական ծրագրեր իրականացնելու առումով:

Անդրադառնալով անչափահասների նկատմամբ կիրառվող պրոբացիոն գործառնություններին՝ հարկ է նշել, որ ի լրումն ընդհանուր, արդեն իսկ ներկայացված չափանիշներին, կիրառվում են որոշակի առանձնահատկություններ, որոնցից գլխավորներն են զեկույցների պարտադիր տրամադրումը բոլոր փուլերում և ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառումը:

Զեկույցները պատրաստելու առանձնահատկություններից են՝

1) պրոբացիոն ծառայողը պարտադիր կարգով հարցազրույց է ունենում ոչ միայն անչափահասի, այլ նաև նրա օրինական ներկայացուցչի հետ, անչափահասի հետ ունեցած հարցազրույցին պարտադիր պետք է ներկա լինի օրինական ներկայացուցիչը:

2) պրոբացիոն ծառայողը դիմում է համապատասխան խնամակալության և հոգաբարձու մարմին՝ անչափահասի վերաբերյալ տեղեկատվություն և տվյալներ ստանալու, ինչպես նաև նման մարմինների և անչափահասի միջև առկա առնչությունը պարզելու համար:

3) զեկույցում անչափահասի անձի բնութագիրը, ընտանեկան դրությունը, առողջական վիճակը և այլ մանրամասներ ներկայացնելուց բացի, կրթական հաստատություններում պետք է ներկայացվեն տվյալներ անչափահասի առաջադիմության և վարքի, նրա հակումների, նախասիրությունների վերաբերյալ:

4) մինչև պատժի նշանակումը՝ տրամադրվող զեկույցը պարունակում է նաև եզրակացություն՝ անչափահասին քրեական պատասխանատվությունից ազատելու և նրա նկատմամբ դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու հնարավորության վերաբերյալ, և այդ դեպքում՝ նրա հետագա պարտավորությունների մասին:

Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 91-րդ հոդվածի՝ առաջին անգամ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած անչափահասը դատարանի կողմից կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե դատարանը ենթադրի, որ նրա ուղղվելը հնարավոր է դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառմամբ:

Անչափահասի նկատմամբ դատարանը կարող է նշանակել դաստիարակչական բնույթի հարկադրանքի հետևյալ միջոցները.

1) նախազգուշացում.

2) ծնողների կամ նրանց փոխարինող անձանց կամ տեղական ինքնակառավարման կամ դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի հսկողությանը հանձնելը՝ առավելագույնը վեց ամիս ժամկետով.

3) պատճառված վնասը հարթելու պարտականության կատարումը՝ դատարանի սահմանած ժամկետում.

4) ժամանցի ազատության սահմանափակումը և վարքագծի նկատմամբ հատուկ պահանջների սահմանումը՝ առավելագույնը վեց ամիս ժամկետով:

Նշված միջոցներից հսկողության իրականացումը և ժամանցի ազատության սահմանափակման և վարքագծի նկատմամբ հատուկ պահանջների պահպանման վերահսկողությունը պետք է վերապահվեն Պրոբացիայի ծառայությանը՝ հաշվի առնելով այս ծառայության բնույթն ու նշանակությունը:

Անչափահասի նկատմամբ հսկողության իրականացումը և ժամանցի ազատության սահմանափակման և վարքագծի նկատմամբ հատուկ պահանջների պահպանման վերահսկողությունը պետք է զուգորդվեն անչափահասին տարբեր ուսումնադաստիարակչական, սոցիալ-հոգեբանական, վերականգնողական ծրագրերում ակտիվ ներգրավմամբ: Պրոբացիոն ծառայությունը պետք է նաև, այլ կառույցների հետ համագորակցության միջոցով, ակտիվորեն աջակցի անչափահասին՝ զբաղվածության կամ հետագա կրթությանը վերաբերող հարցերը լուծելիս:

Պրոբացիայի ծառայության կողմից ներկայացված զեկույցի հիման վրա դատարանն անչափահասի նկատմամբ կարող է նշանակել դաստիարակչական բնույթի հարկադրանքի այլ միջոցներ:

Եթե անչափահասը դաստիարակչական բնույթի հարկադրանքից պարբերաբար խուսափում է, ապա Պրոբացիոն ծառայության միջնորդությամբ նյութերն ուղարկվում են դատարան՝ նշանակված միջոցը վերացնելու և անչափահասին համապատասխան պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար:

Պրոբացիոն ծառայությունները (այդ թվում անչափահասների) ժամանակի ընթացքում ավելի ու ավելի են ընդգրկում արտադատական միջոցներ (diversion): Նման երկրներից են հատկապես Չեխիան, Հունգարիան, Սլովակիան և այլն: Այս միջոցների թվին են հաճախ դասվում նաև մեղիացիոն գործընթացները: Նշված միջոցն ըստ էության հանդիսանում է քրեական դատավարությանն այլընտրանք, որի արդյունքում ան-

չափահաս հանցագործի հետ գործընթացներն ավարտվում են նախաքննության փուլում՝ օրինակ դատախազական օղակում: Այս արտադատական միջոցի կարևոր նպատակներից մեկը անչափահասին քրեական դատավարության, հատկապես դատաքննության լարված ու սթրեսային հոգեվիճակներից զերծ պահելն է: Այս միջոցի կիրառման ավարտը լինում է դատախազի կողմից գործի կասեցումը կամ կարճումը (Ավստրիա, Չեխիա, Դանիա, Գերմանիա, Հունգարիա, Լատվիա, Լյուքսեմբուրգ, Մալթա և այլն)<sup>83</sup>:

Մեր կարծիքով, Հայաստանում ևս անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ ամրագրել անչափահասների գործերով, արտադատական միջոցների լայն կիրառման հնարավորություններ ու երաշխիքներ: Այս միջոցների կիրառումը կհանգեցնի անչափահասների նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու, ազատազրկումը որպես հիմնական պատիժ նշանակելու նվազ կիրառմանը, ինպես նաև հանցագործություն (նաև կրկնահանցագործություն) կատարելու հավանականության նվազմանը:

Հ/Հ	Պրոբացիայի գործունեության ընդհանուր ոլորտներ	Ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեից (մլն. դրամ)			Ֆինանսավորումը դոնոր հանրության կողմից (մլն. դրամ)		
		2013	2014	2015	2013	2014	2015
1.	<b>ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՊՐՈԲԱՑԻԱ</b> Խափանման միջոցի ընտրության նպատակով մինչդատական զեկույցների տրամադրում կասկածյալի/մեղադրյալի անձի վերաբերյալ: Տուժողի և մեղադրյալի հաշտեցման իրականացում (մեղիացիա):						
2.	<b>ԴԱՏԱԿԱՆ ՊՐՈԲԱՑԻԱ</b> Պատժի նշանակման, հետաձգման կամ պայմանականորեն չկիրառելու և ՀՀ Քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված պատժի տեսակը և չափը որոշելու համար՝ դատարանին մասնագիտական զեկույցի տրամադրում ամբաստանյալի (ների) վերաբերյալ:	204.0	510.0	306.0	48.0	120.0	72.0

<sup>83</sup> European Probation Service Systems: A Comparative Overview. Anton M. van Kalmthout and Ioan Durnescu.

3.	<p><b>ՊԵՆԻՏԵՆՑԻԱՐ ՊՐՈԲԱՑԻԱ</b></p> <p>Այլընտրանքային պատիժների կատարում:</p> <p>Պատիժը պայմանականորեն չկիրառելու դեպքում փորձաշրջանի կազմակերպում և իրականացում:</p> <p>Սոցիալ-հոգեբանական վերականգնողական աշխատանքների իրականացում:</p> <p>Պատժից ազատված անձի վարքի վերահսկողություն:</p> <p>Պատիժը հետաձգած անձանց նկատմամբ վերահսկողություն: Պատժի անհատական պլանավորման ընթացքում խորհրդատվության տրամադրում (հորիզոնական համագործակցություն):</p> <p>Ղատապարտյալի պատժից պայմանական վաղաժամկետ ազատման կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու փորձագիտական զեկույցի ներկայացում:</p> <p>Ներման ներկայացված ղատապարտյալի անձնային առանձնահատկությունների վերաբերյալ խորհրդատվական զեկույցի տրամադրում:</p>						
4.	<p><b>ՀԵՏՊԵՆԻՏԵՆՑԻԱՐ ՊՐՈԲԱՑԻԱ</b></p> <p>Փորձաշրջանում իրականացվող աշխատանքներ՝ ավելացված ղատարանի կողմից նշանակված պայմաններ, կոնկրետ հոգեբանաբժշկասոցիալական միջամտություններ և այլն:</p>						

Պահանջվող ֆինանսավորման ծավալը հաշվարկելիս միջդատական վարույթում որպես ելակետային ցուցանիշ է ընդունվել դատական քննության ընթացքում և հետդատական շրջանում կալանավորված և դատապարտված անձանց ընդհանուր թիվը, որը 2012 թվականի ապրիլի դրությամբ կազմում է 4680 մարդ:

Հաշվարկվել է պրոբացիոն աշխատողների թիվը՝ 5000.0 դատապարտված, կամ մինչդատական վարույթում և դատական քննության ընթացքում գտնվող անձանց հաշվով՝ ելնելով այն հանգամանքից, որ մեկ պրոբացիոն աշխատող կարող է արդյունավետ վարել առավելագույնը 50-60 դեպք:

Պետության կողմից մեկ պրոբացիոն աշխատակցի ծախսը կկազմի է առնվազն տարեկան 3.6 մլն. դրամ (230-240 հազ. դրամ միջին ամսական զուտ աշխատավարձի դեպքում), իսկ պահանջվող 100 մասնագետի համար՝ տարեկան 360.0 միլիոն դրամ:

Յուրաքանչյուր պրոբացիոն աշխատող 50 դեպք վարելու համար պետք է ունենա համակարգիչ և ավտոմեքենա (կասկածյալի հիմնարկ կամ տուժողի և/կամ հանցագործի տուն, աշխատանքի/ուսման վայր մեկնելու, նրա կենցաղային, ընտանեկան, աշխատանքային պայմաններին ծանոթանալու ու վերլուծելու նպատակով): Հետևաբար 100 աշխատողի համար համակարգիչ ձեռք բերելու արժեքը կկազմի 300.0 հազ. դրամ\* 100 = 30.0 միլիոն դրամ:

Համակարգիչների հետ առնչվող այլ սարքավորումների և գրենական պիտույքների ձեռքբերման ծախսերը կկազմեն տարեկան մինչև 10.0 միլիոն դրամ:

Ավտոմեքենաների ձեռքբերման ծախսերը կկազմեն նվազագույնը 6.0 միլիոն դրամ \* 100 = 600.0 միլիոն դրամ, իսկ մեքենաների տարեկան սպասարկման ծախսը կկազմի առնվազն 60.0 միլիոն դրամ:

Էլեկտրոնային հսկողության դեպքում, Էլեկտրոնային հսկողության մեկ սարքավորման միջին գինը կազմում է մոտ 250 եվրո: Սարքավորումների ընդհանուր պահանջը կկազմի 375.000.0 եվրո (250\*1500, փորձաշրջանում գտնվողներ կամ հանրային աշխատանքների դատապարտվածներ):

Այսպիսով, վերոնշյալ քաղաքականության միջոցառումներն ու ծրագրերը իրագործելու համար ֆինանսավորման ընդհանուր պահանջը կկազմի 1260.0 մլն. դրամ, որից, մեր կարծիքով, համակարգիչների և պահանջվող սարքավորումների ֆինանսավորումը հնարավոր է ակնկալել դոնոր հանրությունից (240.0 միլիոն. դրամ), իսկ մնացած գումարները կհատկացվեն ՀՀ պետական բյուջեից (1020.0 միլիոն դրամ):

Բոլոր պլանավորվող գումարները 2013-2015 թվականների համար բաշխված են ըստ տարիների՝ համապատասխանաբար 20, 50, և 30 տոկոս հարաբերակցությամբ՝ հաշվի առնելով թե՛ ծրագրերի իրականացումը սկսելու համար անհրաժեշտ նախապատրաստման ժամանակահատվածը և թե՛ միջնաժամկետ հատվածում առկա ֆինանսական ռեսուրսների ծավալը:







Տպագրված է «ԱՍՈԴԻԿ» հրատարակչության տպարանում:  
Ք. Երևան, Սալյաթ-Նովա 24, (գրասենյակ)  
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)  
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63  
Էլ. փոստ՝ [info@asoghik.am](mailto:info@asoghik.am)

